

**ՄԵՐ ԱՆԿԻՆԵՆ**

**ՊԱՐԱՔ ՕՊԱՄԱՆ  
 ՇՈՒՏՈՎ ՊԻՏԻ  
 ՀԱՆԳՐՈՒԱՆԵ ԻՐ  
 ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ  
 ԵՐԴՈՒՄԸ  
 ՏՕԳԹ Ա. ԳԱԶԱՆՃՅԱՆ**

Հագիւ շաբաթ մը միայն կը բաժնէ մեզ այն օրէն, երբ 77 օրուան փոխանցման ժամանակաշրջանը կը հասնի իր աւարտին: Նորընտիր նախագահ Պարաֆ Օպամա իր սահմանադրական երդումը տալէ ետք կը մտնէ Սպիտակ Տուն, 20 Յունուար 2009-ին: Դիտել տանք անմիջապէս, որ փոխանցման շրջանի այդ 77 օրերը դարձան ֆիլանսական նկատմամբ եւ կազմի պատերազմով լրջօրէն ծանրացնուած մտահոգիչ շրջան մը, գործի հանգամանէ պիտի դիմագրաւէր ան կանի մը օրէն, տալէ ետք իր սահմանադրական երդումը: Առաջին օրէն, Պարաֆ Օպամա, ապացուցեց աշխատանքի մարդը ըլլալու վարձագիծ:

Դիտել տանք, թէ Օպամա, ինչպէս իր համար ժամանակի ամէն կորուստ, նախաձեռնեց իր կառավարութեան կազմութեան սպառնալի աշխատանք մը, որ ընդհանրապէս կը կատարուի սահմանադրական երդումը տալէ ետք: Նախընթացը չէր տեսնուած Ամերիկայի Միացեալ Նահանգներու նորընտիր նախագահներու պատմութեան մէջ. Անոնք իրենց աշխատակազմերը որոշելու համար միսնեք ժամանակ կը յատկացնէին: Յունուար 20-ին իր տալիս Սահմանադրական երդումէն ետք,

Շաբ.ը էջ 16

**«ԱԶԱՏՈՒԹԵԱՆ ՏՈՒՆ»-Ի ՏԱՐԵԿԱՆ ՏԵՂԵԿԱԳԻՐԸ ԿՐ ՅԱՅՏՆԵ ԹԵ ՀԱՅԱՍՏԱՆԸ ԵՏՔ ՔԱՅԼ ԱՐՁԱՆԱԳՐԱԾ Է**

«Ազատութեան Տուն» (Freedom House) եւ Մարդկային Իրաւանց Հսկիչ (Human Rights Watch) միջազգային հեղինակաւոր կազմակերպութիւնները հերթաբար հրատարակելով իրենց տարեկան զեկոյցները, եկան խիստ զնահատականներ տալու Հայաստանի մէջ տիրող կացութեան:

Յունուար 12-ին «Ազատութեան Տուն» կազմակերպութիւնը հրատարակեց իր տարեկան զեկոյցը՝ աշխարհի բոլոր երկիրներու մէջ ազատութիւններու իրավիճակի վերաբերեալ:

Ըստ զեկոյցի, անցեալ տարի Հայաստանի գլխաւոր իրադարձութիւնը՝ Փետրուար 19-ի նախագահական ընտրութիւնն էր եւ անոր յաջորդող դէպքերը: «Ազատութեան Տուն»-ի հետազոտութիւններու բաժնի տնօրէն Քրիսթոֆըր Ուոքըրը «Ազատութիւն» ռատիոկայանին տուած իր հարցազրոյցին մէջ ըսած է, որ Հայաստանի քաղաքական իրաւունքներու վարկանիշը անկում արձանագրած է՝ 5-էն իջնելով 6-ի:

Ուոքըրի համաձայն, այս անկումը նախեալու պայմանաւորուած է ընտրութիւններէն յետոյ տեղի ունեցած իրադարձութիւններով, որոնց ընթացքին գտնուած է 10 հոգի, իսկ հարիւրաւոր մարդիկ վիրաւորուած են:

«Քաղաքացիական ազատութիւններ» ցուցանիշով Հայաստանը պահպանած է իր ունեցած 4 միւլտրը եւ ընդհանուր հաշուով վերստին կը նկատուի մասամբ ազատ երկիր:

Հայաստանի դրացի երկիրներուն մէջ առաջին կարգի վրայ կը



Նախագահական ընտրութիւններու յաջորդած վերելի տեսարաններու պատճառաւ Հայաստան կը շարունակէ մնալ «մասամբ ազատ» երկիր

զայ թուրքիան, թէեւ այդ երկիրը եւս կը նկատուի մասամբ ազատ: Վրաստան նոյնպէս մասամբ ազատներու շարքին է: Ատրպէյճան եւ Իրան նկատուած են ոչ ազատ: Տարածաշրջանին մէջ միայն թուրքիան կը նկատուի ժողովրդավարութեան երկիր: Հայաստան այս առումով 1995-98 թուականներէն ի վեր միայն 1999-2002

թուականներուն ճանչցուած է որպէս ժողովրդավարական: «Ազատութեան Տուն»-ի զեկոյցին մէջ ամփոփուած են տեղեկութիւններ 193 երկիրներու մասին: Այդ երկիրներէն ազատ նկատուած են 89-ը, մասամբ ազատ՝ 62-ը եւ ոչ ազատ են 42-ը:

Շաբ.ը էջ 4

**ԹՈՒՐՔ ՄՏԱԻՈՐԱԿԱՆՆԵՐՈՒ ՆԱԽԱՁԵՌՆՈՒԹԵԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹԵԱՄ ԴԱՏԱԿԱՆ ԳՈՐԾ**

Թուրքիոյ դատախազութիւնը քննութիւն բացած է, որու արդիւնքը կրնայ ըլլալ այն, որ մեղադրանքներ առաջադրուին հայերէն ներողութիւն խնդրելու ինթըրնէթային արշաւի նախաձեռնողներուն դէմ: «Անատոլիա» գործակալութեան համաձայն՝ Անգարայի նահանգային դատախազը կը փորձէ պարզել, թէ արդեօ՞ք նախաձեռնութեան հեղինակ մտաւորականները խիստած են թուրքիոյ քրէական օրէնսգրքի 301 յօդուածը, որ քրէական պատասխանատուութիւն կը նախատեսէ «թուրք ժողովուրդին վիրաւորելու» համար:

Շուրջ 200 թուրք մտաւորականներ մօտ մէկ ամիս առաջ ինթըրնէթի վրայ տեղադրուած յայտարարութեամբ, հայ ժողովուրդէն ներողութիւն կը խնդրեն Ա. Համաշխարհային պատերազմի տարիներուն տեղի ունեցածի համար, զայն որակելով «Մեծ աղէտ», իսկ հայերէն տարբերակին մէջ՝ «Մեծ եղեռն»: Յայտարարութեան արդէն իսկ միացած են 25 հազարէ աւելի մարդ:

Նախաձեռնութիւնը արժանացած էր թուրքիոյ վարչապետ Ռեջէփ Էրտողանի եւ զինուած ուժերու ազդեցիկ ներկայացուցիչներու քննադատութեան:

Ի պատասխան Եւրոմիութեան խիստ քննադատութեան, թուրքիա անցեալ տարի փոփոխութիւն կատարած էր տիրահաշակ 301 յօդուածին մէջ:

**ԼԻԲԱՆԱՆԱՀԱՅԵՐՈՒ ՈՒՇԱԴՐՈՒԹԵԱՆ**

Յառաջիկայ Յունիս 7-ին տեղի պիտի ունենան Լիբանանի խորհրդարանական ընտրութիւնները: Այն լիբանանահայերը, որոնք կ'ուզեն մասնակցիլ այդ ընտրութիւններուն, կրնան հեռաձայնել Ս.Դ. Հնչակեան Կուսակցութեան գրասենեակը՝ 626-398-0506 թիւին եւ ստանալ յաւելեալ մանրամասնութիւններ: Ս.Դ.Հ.Կ. Արեւմտեան Ամերիկայի Վարիչ Մարմին

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԲԱՆՏԱՐԿԵԱԸ ՅԱՂԹԵՑ ԵՒՐՈՊԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԵՆ ՆԵՐՍ**

Յունուար 13-ին Եւրոպական դատարանը բաւարարած է ներկայիս քաղաքական բանտարկեալի կարգավիճակին մէջ գտնուող եւ մեկուսարանին մէջ իր «պատիժը» կրող «Հանրապետութիւն» կուսակցութեան անդամ Ժորա Սափէեանի հայցը:

Սափէեանը, ինչպէս նաեւ 2003 թուականին վարչական կալանքի ենթարկուած Սարգիս Ամիրեանն ու Մաքսիմ Գասպարեանը իրենց ոտնահարուած իրաւունքը վիճարկած էին Եւրոպական դատարանի մօտ: Անոնք դատարան դիմած էին 2003 թուականի նախագահական ընտրութիւններու առաջին փուլին յաջորդած իրադարձութիւններու կապակցութեամբ, երբ չարտօնուած հանրահաւաքներուն մասնակցելու համար Ամիրեան եւ Գասպարեան ենթարկուած էին տասնօրեայ վարչական կալանքի, իսկ Սափէեանը՝ վարչական տուգանքի:

Դատարանի այս որոշումի հիման վրայ, Հայաստանի Հանրապետութիւնը ստիպուած կ'ըլլայ ընդունիլ, որ խիստած է իր քաղաքացիներու ազատութեան իրաւունքը, որը ամրագրուած է Մարդու Իրաւունքներու Եւրոպական Ուխտի 11-րդ յօդուածով եւ այժմ պէտք է իւրաքանչիւրին վճարէ 3 հազարական Եւրօ փոխհատուցում:

Եւրօ դատարանում երեք հայցւորներ շահերի ներկայացուցիչ փաստաբան, «Ֆորում» իրավունքի կենտրոնի ղեկավար Տիգրան Տերեւսեանը «Ա.1+»-ի հետ գրոյցում նկատեց, որ դեռ կան վարչական կալանքի գործեր Եւրոպատարանում, որոնք եւս կբավարարվեն, քանի որ խիստուել են կոնվենցիայի տարբեր հոդուածներ: Հիշեցնենք, որ 2003-2004 թվականի քաղաքական զարգացումների պատճառով մեկուսարաններում յայտնուած քաղաքացիների 6 հայց Եւրոպատարանն արդէն բաւարարել է:

**ՀԱՅԱՍՏԱՆԵԱՆ ՄԱՍԻՍ**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ԻՇԽԱՆՈՒԹԵԱՆ ԵՐԵՒԱԿԱՅՈՒԹԻՒՆՆ ՈՒ ԵՐՈՊԱՅԻ ՓՈԽՁԻՉՈՒՄԸ**

Յունուարի 14-16-ը Հայաստանում են լինելու ԵՆ պատուիրակներ, Հայաստանի հարցի համագեկուցողներ Ջոն Պրեսկոտն ու Ջորջ Կոլոմբիէն: Ինչպես յայտնի է, նրանք պետք է ուսումնասիրեն Հայաստանի վիճակը, տեսնեն, թե ինչ քայլեր են կատարուել քաղաքականությանը ինդիքը վերացնելու, Մարտի 1-ի իրադարձությունները բացառապես ուղղութեամբ ել գնան ու գեկուցեն ԵՆԽՎ-ին, որ այդ կառույց էլ իր ձեռնարկն անողը ընթացքում որոշի՝ զրկել Հայաստանին ձայնի իրաւունքից, թէ էլ ժամանակ տալ առկա ինդիքները վերացնելու համար: Մինչեւ եւրոպացի համագեկուցողները կը գալին, Հայաստանի Ազգային ժողովի նախագահ Հովիթ Աբրահամեանը յայտարարեց, որ Հայաստանի իշխանութիւնը կատարել է ԵՆ 1609 եւ 1620 բանաձեւերի բոլոր պահանջները: Հովիթ Աբրահամեանին այս դէպքում պետք է ընկալել ոչ միայն օրէնսդիր մարմնի, այլ նաեւ մի քանի ամիս առաջ Սերժ Սարգսեանի հրամանագրով ստեղծուած աշխատանքային խմբի ղեկավար: Այդ խումբը հենց մշակուած էր 1609 եւ 1620 բանաձեւերի կատարման ժամանակացույցը, այն ժամանակ նախագահի աշխատակազմի ղեկավար Հովիթ Աբրահամեանի գլխավորութեամբ: Հիմա Աբրահամեանը յայտարարում է, որ բանաձեւերի դրոյթներն ամբողջութեամբ

կատարուած են: Իհարկէ, դեկտեմբերի 17-ին փարիզում տեղի ունեցած ԵՆ մոնիտորինգի յանձնաժողովի նիստը, դրա ընթացքում Հայաստանի վերաբերեալ հնչած գնահատականներն ու կայացուած վճիռը՝ իրավիճակը չփոխուելու դէպքում Յունուարի վերջին Հայաստանին զրկել ձայնի իրաւունքից, վկայում են, որ եւրոպացիներն այս դէպքում այդքան էլ համամիտ չեն:

**Եթէ եւրոպացիները գալիս են, ուրեմն նրանք գալիս են Հայաստանի իշխանութեան հետ բանակցելու, հնարաւորութիւն տալու, որ իշխանութիւնը համոզի իրենց**

Հայաստանի ԱԺ նախագահի հետ: Սակայն, պարզ է, որ եթէ մեր ԱԺ նախագահը պետք է արտայայտեր եւրոպացիներին համահունչ մտքեր, ապա էլ ինչու էին նրան նշանակում ԱԺ նախագահ: Դա իմիջիայլոց: Ինչ վերաբերում է բուն ինդիքին, այսինքն եւրոպական պահանջների կատարմանը, մասնաւորապէս քաղաքականությանը հարցի լուծմանն ու Մարտի 1-ի բացառապետական, ապա ակնյայտ է, որ Պրեսկոտին ու Կոլոմբիէին շատ տքնել պետք է նկատելու համար, որ Հայաստանի իշխանութիւնն այդ երկու ուղղութեամբ չի կատարել զրկել ոչ մի էական աշխատանք: աւելին, նաեւ ակնարկել է, որ չի կատարելու եւ դատելու է, իսկ յետոյ նոր մտածելու համաներման

մասին: Թւում է, որ այդ յայտարարութիւններից յետոյ Պրեսկոտն ու Կոլոմբիէն աւելորդ փող են մսխելու ԵՆԽՎ գանձարանից, այն էլ տնտեսական ճգնաժամի այս օրերին, ու գործուղման են գալու Հայաստան: Այն բանից յետոյ, երբ Հայաստանի ԱԺ նախագահը յայտարարում է, որ համաներում կը լինի միայն դատական պրոցէսի աւարտից յետոյ, երեւի թէ եւրոպացիների համար պետք է ամէն

ինչ պարզ լինէր, եւ նրանք պետք է ոչ թէ Երեւան գալին, այլ հանդէս գալին՝ համարժէք յայտարարութեամբ յիշեցնելով Հայաստանի իշխանութեանը, որ համաներման ժամանակի մասին այդ պատկերացումը իրենց ամենեւին չի բաւարարում: Եթէ եւրոպացիները գալիս

**ԻՇԽԱՆՈՒԹԻՒՆԸ ԿԸ ՆԱԽԸՆՏՐԻ ԻՆՔՆԱԿՈՐԾԱՆՄԱՆ ԾԱՆԱՊԱՐՅԸ**

Նշանակուած է «ԵՈՒԹԻ գործով» դատավարութեան հերթական նիստը: Մեծ է հաւանականութիւնը, որ նախորդ նիստերի նման այն եւս չկայանայ ամբաստանողները ոտքի չկանգնեն, դատաւորն էլ, դա գնահատելով անյարգալից վերաբերմունք դատարանի նկատմամբ՝ յետաձգի նիստը:

Ոմանք սա կարող են անուանել նեարդերի պատերազմ, ոմանք՝ փակուղի, երրորդները՝ դատավարութիւնը ձգձգելու փորձ... Բայց ինչ մեկնաբանութիւն էլ տրուի, ակնյայտ է, որ դատաւորը յայտնուել է անհեթեթ վիճակում, որից դուրս գալու համար կամ պիտի քաջութիւն գտնի իր մէջ եւ ինքնուրոյն քայլ անի (շարունակի նիստը, ինքնաբացարկ յայտնի եւ այլն) կամ նոր յանձնարարութիւն ստանայ եւ փորձի տեղաւորել այդ յանձնարարութիւնը իրաւական հարթութիւնում: Շատ աւելի հաւանական է երկրորդ տարբերակը, քանի որ դատաւոր Մնացական Մարտիրոսեանը առաւելապէս յայտնի է որպէս անձնագործ ու վարկաբեկուած հպատակ, եւ բացարձակապէս յայտնի է որպէս անձնագործ ու պարկեշտ դատաւոր: Ուստի նա երբեք չի անսայ Ալեքսանդր Արզումանեանի յորդորին եւ չի ինքնահրկազուի:

Դատելով իշխանութիւնն ամէն գնով պահպանել ձգտողների փչացածութեան աստիճանից՝ կարող ենք ենթադրել, թէ ինչ յանձնարարութիւն է տրուելու նրան՝ ստեղծուած իրավիճակից դուրս գալու համար: Նրան յանձնարարուելու է մեղադրուողներին հեռացնել դահլիճից եւ դատավարութիւնը սկսել նրանց բացակայութեամբ: Սա, իհարկէ, կը դիտուի որպէս հերթական խայտառակութիւն, հասարակութիւնն ու եւրոպական կառույցները հերթական անգամ թուքում կը տան ՀՀ իշխանութիւններին, եւ վերջիններիս ամենաանբերաբար ակնկալներն են երկայացուցիչները հերթական անգամ կ'ասեն, թէ անձրեւ է գալիս: Իշխանութիւնից կառուցածները իրենց դիրքերը պահպանելու համար այլ տարբերակ չեն տեսնում: Խնդիրն այն է, սակայն, որ սա էլ է ժամանակաւոր լուծում: Ոչ

են, ուրեմն նրանք գալիս են Հայաստանի իշխանութեան հետ բանակցելու, հնարաւորութիւն տալու, որ իշխանութիւնը համոզի իրենց: Մինչդեռ թւում է, որ դրա համար ամենեւին էլ կարիք չկար, որ Պրեսկոտն ու Կոլոմբիէն կրկին գան Հայաստան: Այն քայլերը, որ պահանջուած է Հայաստանի իշխանութիւնից երկրում ժողովրդավարութեան եւ քաղաքականութիւնների վիճակը իրապէս առաջ մղելու համար, նկատելի կը լինեն նաեւ Ստրասբուրգից, ու ամենեւին կարիք չկայ Հայաստան: Հետեւաբար, իրենց գալով եւրոպացիներն արդէն իսկ յայտնում են ինչ որ կոմպրոմիսի գնալու պատրաստակամութիւն: Խնդիրը պարզապէս Հայաստանի իշխանութեան երեւակայութիւնն է, որով էլ կը կանխորոշուի եւրոպացիների փոխզիջման աստիճանը: **ՅԱԿՈՒ ԲԱԴԱԼԵԱՆ «ԼՐԱԳԻՐ»**

**ԱՆԿԵՂԾՈՒԹԵԱՆ ՄԱՍԻՆ**

«7»-ի դատավարութիւնը, ինչպէս եւ սպասուած էր, մտել է խորը փակուղու մէջ: Հիմնական պատճառն այն է, որ իշխանութիւնը չի ցանկանում, որ այն լինի բաց եւ լուսաբանուի լրատուամիջոցների կողմից, իսկ միւս կողմից էլ՝ բաւարար հիմքեր չունի դատավարութիւնը փակ յայտարարելու համար: Իհարկէ, եթէ առաջնորդուենք Գալուստ Գրիգորիչի առաջարկած դեղատոմսերով, ապա կարելի է այդ հիմքերը չփնտուել, դատարանի դահլիճ «տուժած ուստիկաններ», սահմանափակներ եւ այլ սաղորիչներ չուղարկել, 15 րոպէսում փակ դատավարութիւն անել եւ եւրոպացիների կշտամբանքների վրայ, մեղմ ասած, ուշադրութիւն չդարձնել: Պարոն Սահակեանի նախանշած ծրագիրը հետեւողականօրէն կիրառելով՝ հնարաւոր կը լինէր ընդհանրապէս որեւէ դատավարութիւն չանել եւ Շարիաթի օրէնքներով գնդակահարել ժողովրդի 7 թշնամիներին Հիւսիսային պողոտայի որեւէ էլիտար շինութեան պատի տակ: Բայց այդ ամէնը գուտ երեւակայական ոլորտից է. Հայաստանի իշխանութիւնը չի կարող ամբողջութեամբ արհամարհել քաղաքակիրթ աշխարհի կարծիքը՝ չունի դրա համար ոչ քաղաքական, ոչ էլ տնտեսական ռեսուրսներ: Աւելին՝ նոյնիսկ ստալինեան ռեժիմը, որն ունէր այդ ռեսուրսները, միշտ չէ, որ ոչնչացնում էր մարդկանց «սորչկա»-ի որոշմամբ: Նոյն 1930-ական թուականներին ԽՍՀՄ-ում անց էին կացում նաեւ բաց դատավարութիւններ, որոնց երբեմն հրաւիրուած էին նաեւ արտասահմանցի «առաջադէմ» (ժամանակակից հայաստանեան եզրաբանութեամբ՝ «պատասխանատու») լրագրողներ: Այդ բաց դատավար

ութիւնների ժամանակ ամբաստանաւորները անկեղծօրէն խոստովանում էին, որ իսկապէս մտադրութիւն ունէին փորել Լոնդոն-Բոմբէյ ստորգետնեայ թունելը եւ լրտեսութիւն անել իմպերիալիստական 4 կամ 5 պետութիւնների օգտին: Իսկ փողոցներում բազմահազարանոց հանրահաւաքներ էին տեղի ունենում, որոնց մասնակիցները նոյնքան անկեղծօրէն պահանջում էին անյապաղ գնդակահարել պետութեան հիմքերը խարխուղներին: Հետեւաբար, եթէ ինդիք կա աշխարհին, «միջազգային հանրութեանը» որեւէ բան ցոյց տալու, ապա «անկեղծների» պակաս չի զգացուի: «7-ի» դատավարութեան գործուղողը նոյն ուստիկանները իսկապէս անկեղծօրէն համոզուած են, որ ամբաստանաւորները պետութեան թշնամիներ են: Գրիգոր Ամալեանը անկեղծօրէն վստահ է, որ փակելով «Ա1+»-ը՝ նա ամբապնդել է պետութեան հիմքերը: «Հայլուրի» աշխատակիցները անկեղծօրէն հաւատում են, որ մենք ապրում ենք Շուքրաբախից էլ լաւ մի երկրում, որտեղ ամէն օր ճանապարհներ են կառուցուած եւ հազարաւոր աշխատատեղեր են ստեղծուած: ԱԳ փոխնախարար Շաւարշ Քոչարեանն անկեղծօրէն համոզուած է, որ Հայաստանն այլ լեւս աւտորիտար երկիր չէ, այստեղ չեն կեղծուած ընտրութիւնները եւ չեն խախտուած մարդու իրաւունքները: «Անկեղծների» նման հսկայական բանակի առկայութեան դէպքում՝ համոզել եւրոպայի խորհրդին, որ մենք «անշեղորէն շարժում ենք ժողովրդավարական բարեփոխումները՝ ամենապարհով» շատ հեշտ գործ է: **ԱՐԱՄ ԱՔՐԱՀԱՄԵԱՆ «ԱՌԱՒՕՏ»**

**ՄԱՍԻՍ ՇԱԲԱԹԱԹԵՐԹ**  
 ՊԱՇՏՕՆԱԹԵՐԹ՝  
 ՍՈՑԻԱԼ ԴԵՄՈՂՐԱՏ ԶՆՁԱԿԵԱՆ  
 ԿՈՒՍԱԿՑՈՒԹԵԱՆ  
 Արեւմտեան Ամերիկայի Շրջանի

ԽՄԲԱԳԻՐ՝  
 ՏՕԲԸ ԱՐՇԱԿ ԳԱՁԱՆՃԵԱՆ

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ ԿԱԶՄ  
 ԳԱՐԻԷԼ ՍՈԼՈՅԵԱՆ  
 ՍԱՅԱԿ ԹՈՒԹՃԵԱՆ  
 ՎԱԶԳԷՆ ԽՈՏԱՆԵԱՆ  
 ՅԱՐՈՒԹ ՏԵՐ ԴԱԻԹԵԱՆ

Հեռ. (626) 797-7680  
 Ֆաքս. (626) 797- 6863  
 E-Mail: massis2@earthlink.net  
 http://www.massisweekly.com

**MASSIS Weekly**  
 Organ of the Armenian Social Democratic Hunchakian Party of Western USA  
 1060 N. Allen Ave.  
 Pasadena, CA 91104  
 Phone: (626) 797-7680  
 Fax: (626) 797-6863  
 (USPS 667-310) (ISSN 0744-334X)  
 Published Weekly  
 Except Two Weeks in August  
 ANNUAL SUBSCRIPTION RATES:  
 USA \$50.00, Canada \$60 (Second Class), \$75.00 (Air Mail)  
 Overseas \$85.00 (2nd Class Mail), \$125.00 (Air Mail).  
 All payments must be made in US funds & Drawn on US banks.  
 Periodicals Postage Paid at Pasadena CA.  
 Please Send Address Change To  
**MASSIS WEEKLY**  
 1060 N. Allen Ave.  
 Pasadena, CA 91104



ՀԱՅԱՍՏԱՆ

ԱՐՄԵՆ ՅԱՐՈՒԹԻՒՆԵԱՆ. - «ԽՈՇՏԱՆԳՄԱՆ ԴԵՊՔԵՐ ԵՂԵԼ ԵՆ»

Հայաստանի մարդու իրավունքների պաշտպան Արմեն ՅարուԹիւնեանը Յունուար 13-ին «Ազատութիւն» ռադիոկայանի հետ զրոյցում ասաց, որ կալանավայրերում մարդիկ իսկապէս բռնութիւնների ենթարկուած են:

«Կարող եմ փաստել, որ իրօք խոշտանգման դէպքեր եղել են», - ասաց օմբուդամենը, ում գրասենեակի արագ արձագանքման խումբը այսօր այցելել էր կալանավայր: - «Կարելի է երեք խմբի բաժանել այդ մարդկանց: Դէպքեր, երբ մարդիկ իրօք բողոքել են մեզ պաշտօնապէս, եւ մենք դրանով զբաղուած ենք, օրինակ, Ոսկերչեանը, Վարդգէս Գասպարին եւ այլն... Կան դէպքեր, երբ մեր տղաները տեսել են, որ յատակ խոշտանգման հետքեր կան, բայց (կալանաւորները) մերժել են, ասել են՝ ընդամենը ընկել ենք. վախի պատճառով մարդիկ չեն ընդունում, որ խոշտանգման են ենթարկուել: Եւ կան մարդիկ, որոնք ասում են, որ իրենք ծեծի են ենթարկուել, բայց եթէ իրենք յանկար պաշտօնապէս բողոքեն մեզ, ապա խցում պրոբլեմներ կունենան միւս կալանաւորների հետ, որոնք Մարտի 1-ի հետ կապուած չեն: Քրէակատարողական հիմնարկներում, պէտք է ասեմ, որ այդ վախի մթնոլորտը կա, եւ մարդիկ շատ դէպքերում վախենում են նշել, թէ իրենց հետ այս կամ այն խոշտանգման երեւոյթ է տեղի ունեցել»:

Քաղբանտարկեալների իրաւա-



Հայաստանի մարդու իրավունքների պաշտպան Արմեն ՅարուԹիւնեան

կան աջակցութեան կենտրոնի համակարգող Արմէն Խաչատրեանը այսօր «Ազատութիւն» ռադիոկայանի հետ զրոյցում անդրադարձաւ նախագահ Սերժ Սարգսեանի երէկուայ հրամանագրով ներման արժանացած՝ Մարտի 1-ին դէպքերի կապակցութեամբ դատապարտուած ինը անձանց՝ ասելով, թէ այդ մարդիկ ազատութեան մէջ էին դեռ անցած տարեվերջին եւ չբացառելով, որ նրանցից ոմանք խնդրագրերը գրել են ճշունքների ներքոյ:

«Զարմանալին այն է, որ առաջին անգամ երեք է հրապարակուել այդ ակտը, այն դէպքում, երբ այդ մարդիկ ազատութեան մէջ են յայտնուել մինչեւ նոր տարի», - պնդեց Խաչատրեանը: - «Բնականաբար, սա մի ֆարս էր, որով ուզում էին իբր ցոյց տալ պրեսկոտների, որ տեսէք՝ մենք ձեր բանաձեւերի պահանջները կատարում ենք»:

ՀԱՅ ԿԱՄԱԻՐԱԿԱՆՆԵՐԻ ՀԱՄԱԽԱՐԻՄԸ ԴԱՏԱԴԱՐՏՈՒՄ Է ՊԱՂԵՍՏԻՆՑԻՆԵՐԻ ՍՊԱՆԴԸ

«Հայ կամաւորականների համախմբում» ազգային քաղաքական նախաձեռնութիւնը յայտարարութիւն է տարածել կապուած Պաղեստինի Կազալի հատուածում տեղի ունեցող պատերազմի հետ, որտեղ դատապարտում է իսրայէլի կողմից արաբ բնակչութեան տեղի ունեցող «սպանդը»:

«Արդէն 17-րդ օրն է, ինչ Պաղեստինեան ինքնավարութեան Գազալի հատուածի 1,5 միլիոն արաբ ազգաբնակչութիւնը գտնուում է հրէ օղակի մէջ: Իսրայէլական բանակի օդուժը ուժեղացնում է ենթարկում Կազալի հատուածն ամբողջութեամբ, իսկ ցամաքային ռազմական ստորաբաժանումները գերարդիական ծանր գրահատելի կայի օժանդակութեամբ, փորձում են վերահսկողութիւն հաստատել նաեւ բնակավայրերում, նպատակ ունենալով կոտորել պաղեստինցիների դիմադրութեան ոգին:

Իսրայէլական քաղաքական եւ ռազմական ղեկավարութիւնը առաջին անգամը չէ, որ ոչ համարժէք ռազմական գործողութիւններով

փորձում է ծնկի բերել Պաղեստինի արաբ ժողովրդին: Սակայն այս իրադարձութիւնները աննախադէպ են իրենց մասշտաբներով եւ խաղաղ բնակչութեան նկատմամբ անմարդկային վերաբերմունքով:

Ըստ էութեան աշխարհի աչքի առջեւ տեղի է ունենում ժողովրդի սպանդ եւ միջազգային իրաւասու կառուցները, որոնք պարտաւոր էին կասեցնել խաղաղ բնակչութեան նկատմամբ համատարած բռնութիւնների եւ սպանութիւնների գործողութիւնները, անգոր են կատարել իրենց առաքելութիւնը», - նշուած է յայտարարութեան մէջ:

«Հայ կամաւորականների համախմբումը» դատապարտում է կազալում Պաղեստինի արաբ ժողովրդի նկատմամբ տեղի ունեցող սպանդը, կոչ է անում արաբ ժողովրդին ի վերջոյ համախմբուելու, վերջ դնելու պառակտուածութեանը, իսկ Պաղեստինի արաբներին մաղթում է տոկունութիւն եւ յղթանակի հասնելու աննկուն կամք», - ասուած է յայտարարութեան մէջ:

ԴԱՅԿ ԾԱՌԱՅՈՒԹԻՒՆԸ ՎԵՐԱԿՍՈՒՄ Է «ԲՋՆԻ»-Ի ԱՃՈՒՐԴԸ

Դատական ակտերի հարկադիր կատարումն ապահովող (ԴԱՀԿ) ծառայութիւնը վերսկսել է «ԲՋՆԻ» հանքային ջրերի գործարան» ընկերութեան աճուրդը:

«ՍԻՂ» կոնցեռնին պատկանող «ԲՋՆԻ» գործարանում ստուգումները սկսուել են 2007 թուականի Նոյեմբերից:

«ՍԻՂ» կոնցեռնի ներկայացուցիչները պնդում են՝ Սուքիասեան ընտանիքին պատկանող կամ նրա հետ համագործակցող կազմակերպութիւնների նկատմամբ «յատուկ» ուշադրութիւնը եւ, ըստ իրենց՝ ապօրինի ստուգումները սկսուել են անցեալ տարուայ Սեպտեմբերի 21-ից յետոյ, երբ Սուքիասեան եղբայրները իրենց գորակցութիւնը յայտնեցին նախկին նախագահ Լեւոն Տէր-Պետրոսեանին:

«ՍԻՂ» կոնցեռնի նախագահ, Ազգային ժողովի պատգամաւոր Խաչատուր Սուքիասեանը ներկայումս հետախուզման մէջ է Մարտի 1-2-ի դէպքերի կապակցութեամբ յարուցուած քրէական գործով:

ԲԱԳՐԱՏ ԱՍԱՏՐԵԱՆ. «ԻՇԽԱՆՈՒԹԻՒՆՆԵՐԸ ՊԵՏՔ Է ԱԶՆՈՒՕՐԵՆ ԳՆԱՅԱՏԵՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ»

2009 թուականին Հայաստանի համար ամենազլխաւոր տնտեսական մարտահրաւէրը, Հայաստանի կենտրոնական բանկի նախկին նախագահ Բագրատ Ասատրեանի կարծիքով, լինելու է զբաղուածութեան խնդիրը:

«Ազատութիւն» ռադիոկայանին տուած հարցազրոյցում Բագրատ Ասատրեանը նշեց, որ 2009-ին Հայաստանի տնտեսութեան առաջնահերթ խնդիրը կը լինի գործազրկութիւնը:

«Դա պայմանաւորուած է մի շարք հանգամանքներով», - մեկնաբանեց կենտրոնական բանկի նախկին նախագահը, - «համաշխարհային ֆինանսական ճգնաժամ, հայ աշխատաւորի համար արդէն աւանդական դարձած աշխատանքային միջավայրի որակական փոփոխութիւնները, որին հետեւելու են աշխատատեղերի կորուստներ՝ խօսքը Ռուսաստանի մասին է, եւ երրորդ կարեւոր գործօնը՝ գիւղատնտեսութեան ոլորտում թաքնուած գործազրկութիւնը բացայայտուելու է հենց 2009 թուականի ընթացքում»:

Ընդհանրապէս, թէ կառավարութեան ներկայացրած յայտարարութիւններից կարելի է պատկերացնել, թէ խնդիրների լուծման առումով ինչ քայլեր են սպասուում, Ասատրեանը պատասխանեց. - «Խնդիրն այն է, որ ոչ մի բան չի արւում: Իրականում ես դեռ չեմ տեսել որեւէ նախաձեռնութիւն, որեւէ հարցադրում, խնդիրների մի համախումբ, որոնք պէտք է ուղղուած լինեն վիճակից դուրս գալուն»:

«Իմ տպաւորութիւնն այն է, որ միակ ձգտումը այն է, որ գեկուցեն, թէ ինչ լաւ է ամէն ինչ», - ասաց Ասատրեանը, կոչ անելով «ուշքի գալ», քանի որ 2009-ը թուականը

տնտեսական առումով բարդ տարի է լինելու:

«2008 թուականի ամենածանր դրսեւորումը տնտեսութեան մէջ՝ մեր միջազգային պահուստների, ըստ էութեան, վատնումն էր», - նշեց կենտրոնական բանկի նախկին նախագահը, յաւելելով. - «Մտխոսելու միակ ուղղութիւնը, կարող եմ ենթադրել, որ դրամի փոխարժէքի որոշակի մակարդակի պահպանումն է, մի բան, որը կենտրոնական բանկի խնդիրը չէ»:

Այդպիսով, ըստ Ասատրեանի, կենտրոնական բանկը արհեստական կերպով փորձում է ինչ-որ չափով ազդել գնաճի վրայ:

«2009-ին անբարենպաստ գործօնները աւելի մեծ են լինելու: Այս պարագայում պահուստները վատնել թուացեալ խնդիրների լուծման համար, ես կարծում եմ, ուղղակի անլուրջ է», - յայտարարեց Բագրատ Ասատրեանը:

«Այսօր մենք նաեւ ունենք խոշոր ներկրողների մենաշնորհային դիրքի խնդիրը, որն ազդում է գների վրայ: Տեսէք աշխարհում նախաձեռնութիւնների գների ինչքան են իջել: Եթէ Ռուսաստանի կողմ մեզանում շարունակուէր, բենզինի գինը 200 դրամի չափ պէտք է լինէր: Հացի գինը 30 տոկոսով պէտք է նուազեր», - յայտարարեց Ասատրեանը:

Կենտրոնական բանկի նախկին նախագահն առաջարկեց հետեւեալ լուծումները. - «Առաջին հերթին, իշխանութիւնները պէտք է ազնուօրէն գնահատեն խնդիրները ու դրանց դիմակայելու համար ներքին համաձայնութիւն է պէտք՝ քաղաքական համաձայնութիւն: Հեծանիւներ պէտք է յօրինել: Հետեւեւք Ռուսաստանի օրինակին՝ հարկային բեռի թեթեւացման ճանապարհն են բռնել»:

ԽԱՆՈՒԹՆԵՐՈՒՄ «ՃԳՆԱԺԱՍ Է»

Ամանորեայ տօներից յետոյ, վաճառողների խօսքերով, առեւտուրը «մեռած է»: Վաճառուում են միայն ամենամահաբեղտ ապրանքները՝ հաց, թթուասեր, մածուց, ջերմուկ եւ սուրճ:

Վաճառողների խօսքերով՝ իրենք շատ են ուրախանում, երբ որեւէ գնորդ մտնում է խանութ, քանի որ ժամեր են լինում, երբ ընդհանրապէս առեւտուր չեն անում:

«Հիմա մի ամբողջ խանութ՝ իր 4-5 բաժիններով, կարող է աշխատացնել մէկը, քանի որ յաճախորդ չկայ, ազատ նստելուց արդէն ձանձրանում ենք, չգիտենք՝ ինչպէս օրը մթնեցնենք», - ասաց վաճառողուհի Անահիտը:

Նա, թէեւ դժգոհում է վատ առեւտրից, սակայն հասկանում է, որ տօնական առեւտրից յետոյ մարդկանց տներում մեծ քանակու-

թեամբ ուտելիք դեռ կա, դրան էլ գումարում է նաեւ այն, որ մարդիկ ծախսել են իրենց գումարները եւ հիմա բաւարարում են ամենաքչով:

«Հիմա սառնարանում պահեստաւորուած մսերից հանում ենք եւ մի ճաշ կամ փիլաւ պատրաստում ու այդպէս եոյա գնում, քանի որ չգիտենք, թէ ֆինանսական ճգնաժամը յետոյ ինչպէս կ'ազդի մեր վրայ, եւ հետագայում հաց առնելու գումար կ'ունենանք, թէ ոչ», - ասաց տնային տնտեսուհի Վարդուհին:

Մեր համաքաղաքացիներից շատերն էլ նշում էին, որ հիմա բաւարարում են տօներից յետոյ մնացած ուտելիքներով, քանի որ ամբողջ աշխատավարձերը ծախսել են եւ գումար են պահել միայն տրանսպորտի եւ ամենամահաբեղտ ապրանքների համար:

ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ԱՊՐՈՒՄ ԵՆ 300 ՀԱԶԱՐ ԱՂԻԲԵԶԱՆԱՅԱՅԵՐ

Յունուար 13-ին, երբ լրանում է Բաքուում հայերի ջարդերի 19-րդ տարելիցը, ադրբեջանահայութեան ասամբլիայի ղեկավար Գրիգոր Այվազեանը լրագրողների հետ հանդիպման ժամանակ ահազանգել է, որ 19 տարի անց ադրբեջանահայերի խնդիրները դեռ լուծուած չեն ստացել: Նա նշել է, որ Բաքուի ջարդերի հետեւանքով Հայաստան է ներգաղթել 410 հազար ադրբեջանահայ, որոնցից 300 հազարը դեռ ապրում են Հայաստանում, ինչը կազմում է ՀՀ բնակչութեան աւելի քան 10 տոկոսը:

«Ներկայիս Ադրբեջանը նացիստական պետութիւն է՝ հիմնուած հայերի ցեղասպանութեան վրայ», - յայտարարել է նա ու յաւելել. «Ադրբեջանահայութեան խնդիրը Հայաստանը պէտք է որպէս կուռան օգտագործի իր արտաքին քաղաքականութեան օրակարգում»:



ԼՈՒՐԵՐ

ԱՐՑԱԽԻ ԻՇԽԱՆՈՒԹԻՒՆՆԵՐԸ ՉԵՆ ԱՐՏԱՅԱՅՏՈՒՄ ԺՈՂՈՎՐԴԻ ՏԵՍԱԿԵՏՆԵՐԸ



Մանուել Սարգսյան եւ Երուսաղիմ Բոգոբան «Հայելի» ակումբէն ներս տեղի ունեցած ասուլիսի ընթացքին

«Հակամարտութեան կարգաւորման գործում Ղարաբաղը չի կարող համաձայնել կամ չհամաձայնել ինչ-որ բանի հետ: Նրան բանի տեղ դնող չկայ», - այսօր «Հայելի» ակումբում յայտարարեց քաղաքագէտ, ԼՂՀ նախագահի նախկին խորհրդական Մանուել Սարգսյանը:

Ըստ նրա՝ Ղարաբաղի իշխանութիւնները չեն արտայայտում ժողովրդի տեսակէտները, իսկ ժողովուրդն էլ նման է Հայաստանի ծայրամասային շրջանի հասարակութեանը. «Ղարաբաղի հասարակութիւնը չունի այլընտրանքային տեղեկատուական աղբիւր, ճնշուած է բանակից: Այս ամէնը հանգեցնում է նրան, որ Արցախի ժողովուրդը սխալ ընկալի իրականութիւնը եւ արձագանքի ոչ համարժէք»:

Սարգսյանը բացատրեց Ղարաբաղի՝ բանակցային գործընթաց վերադարձի հաւանականութիւնը, քանի որ, ըստ նրա, նոյնիսկ Հայաստանը չի ընդունում Ղարաբաղի լիիրաւ կողմ լինելը. «Ղարաբաղն այսօր ոչ միայն բանակցող

կողմ չէ, այլեւ դադարել է գործուն լինել: Այն Հայաստանի իշխանութեան հրահանգների կամակատար է, եւ Հայաստանն ամէն ինչ արել է, որ ԵԱՀԿ Մինսկի խումբը Ղարաբաղին դիտարկի հենց այդ տեսանկիւնից»:

Քաղաքագէտ Երուսաղիմ Բոգոբանը չհամաձայնեց Մ.Սարգսյանի կարծիքին: Ըստ նրա՝ ԼՂ ինդիքը թէեւ բաւական բարդ ու խճճուած է, սակայն դա չի նշանակում, որ Ղարաբաղը՝ որպէս գործուն, այլեւս չկայ եւ պաշտօնական Ստեփանակերտը պաշտօնական Երեւանի կամակատարն է: Բոգոբանը կարեւորում է հասարակութեան գործունը եւ համոզուած է, որ երկրի համար ձեռնարկարարական պահին ժողովուրդը կասի իր վճռական խօսքը:

Երկու բանախօսներն էլ համակարծիք էին, որ Ղարաբաղեան հակամարտութիւնը կը կարգաւորուի միայն այն ժամանակ, երբ Հայաստանից ու Ադրբեյջանից բացի ընդհանուր յայտարարի գան Մինսկի խմբի համանախագահ երկրները, Իրանը, Թուրքիան:

ՀԱՅԱՍՏԱՆԸ ԵՏ ՔԱՅԼ ԱՐՁԱՆԱԳՐԱԾ Է

Մարտնականութիւն էլ-էն

Յունուար 14-ին իր տարեկան տեղեկագիրը հրատարակեց նաեւ Մարդկային Իրաւանց Հսկիչ կազմակերպութիւնը:

«Միջազգային փորձագէտներու համոզմամբ, Մարտի 1-ին ապահովութեան ուժերը անհամարժէք ուժ կիրառած են նախագահական ընտրութիւններու արդիւնքներու դէմ բողոքող քաղաքացիներու նկատմամբ, իսկ Մարտի 1-էն յետոյ յայտարարուած արտակարգ դրութիւնը ժամանակաւորապէս սահմանափակած է շարք մը հիմնարար իրաւունքներ: Երկու գործողութիւններն ալ լայն քննադատութեան արժանացած են միջազգային հանրութեան կողմից», - ըսուած է Մարդկային Իրաւանց Հսկիչի տեղեկագիրին մէջ:

«Փետրուար 19-ի ընտրութիւններուն յաղթեց վարչապետ Սերժ Սարգսյանը, սակայն այդ ընտրութեան վրայ ստուեր տարածեց քուէարկութեան օրը տեղի ունեցած բռնութիւններու ու կեղծիքները»,- նախագահական ընտրութիւններու բաժինին մէջ գրած են գեկոյցի հեղինակները:

Անդրադառնալով յետընտրական զարգացումներուն մասնագէտները կը յայտնեն. - «Ընդդիմութեան հիմնական թեկնածուի՝ Լեւոն Տէր-Պետրոսեանի հազարաւոր աջակիցներ ընտրութիւններէն յետոյ սկսան բողոքի ցոյցեր կազմակերպել Երեւանի կեդրոնը, որոնք 10 օր շարունակ խաղաղ բնոյթ կը կրէին: Մարտի 1-ին, սակայն, ոստիկանութեան յատուկ ուժերը հակամարտութեան մէջ մտան ցուցարարներու հետ, անոնց նկատմամբ անհամաչափ ուժ գործադրեցին, մահակներով ծեծի ենթարկեցին եւ յարձակեցան փախուստի դիմող ցուցարարներու վրայ»:

Զեկոյցի համաձայն, անցած տարուայ ընթացքին ոտնահարուած է նաեւ խօսքի ազատութեան իրաւունքը, բռնութիւններ կիրառուած են իշխանութիւններուն քննադատող լրագրողներու նկատմամբ:

Մեկնաբանելով «Ազատութեան Տուն»-ի կողմէ Հայաստանի տրուած գնահատականը, Հելսինքեան քաղաքացիական ասամբլիայի վարչապետ Արթուր Սաքունց յայտնեց որ, միջազգային իրաւապաշտպան կազմակերպութեան տրուած գնահատականը չի համապատասխանէր

ՎԱՐԴԱՆ ԽԱՉԱՏՐԵԱՆ. «ԵԹԵ ՌՈՒՍԱՍՏԱՆԻՆ ԶՐԿԵԼ ԵՆ ՔՈՒԷԱՐԿԵԼՈՒ ԻՐԱՒՈՒՆՔԻՑ, ՀԱՅԱՍՏԱՆԻՆ ԻՆՉՈ՞Ւ ՊԻՏԻ ՉԶՐԿԵՆ»

«Հաւանականութիւնը, որ Հայաստանի պատուիրակութեանը ԵՆԽՎ-ում կը գրկեն ձայնի իրաւունքից, մօտաւորապէս 90 տոկոս է, որովհետեւ ԵՆ մարդու իրաւունքների յանձնակատար Թոմաս Համբերբերգի գեկոյցը, որին ինչ-որ չափով տեղեկ եմ, բաւականին կոշտ է կազմուած եւ ֆիքսած է, որ լուրջ տեղաշարժեր, որոնք հիմք կը տան պատժամիջոցը մեղմելու, առայժմ չկան», - այսօր Panorama.am-ին յայտնեց «Ժառանգութիւն» խմբակցութեան պատգամաւոր Վարդան Խաչատրեանը:

Նրա խօսքով, Սերժ Սարգսյանը 9 քաղաքատարկեալների ներելու քայլով իրավիճակը մեղմելու փորձ է անում, «բայց եթէ այնուամենայնիւ քաղաքատարկեալները չազատուեն, դժուար է պատկերացնել, որ լուծումը լինի մեղմ»:

«Հնարաւոր զարգացումներից է նաեւ այն, որ մոնիտորինգի խումբը Ադրբեյջանում էլ է արձանագրել մարդու ու երկրի իրաւունքների ոտնահարումներ եւ այդ կոնտեքստում, հնարաւոր է ԵՆԽՎ-ում կրկին կիրառուի պարիտետը պահելու մօտեցումը Հայաստանի ու Ադրբեյջանի հանդէպ եւ Հայաստանի նկատմամբ հնարաւոր պատժամիջոցը յետաձգուի, մինչեւ Ադրբեյջանի հետ համատեղ կիրառելը: Բայց դա եւ շատ զգուշօրէն են ասում», - նշեց Վ. Խաչատրեանը:

Հարցին, թէ եթէ ՀՀ պատուիրակութեանը ձայնից գրկելու հաւանականութիւնը 90 տոկոս է, այդ

դէպքում ո՞րն է Հայաստանի իշխանութիւնների մտտիվացիան, որ նրանք այնուամենայնիւ չեն կատարում ԵՆ պահանջները, պատգամաւորը պատասխանեց. «Հայաստանի իշխանութիւնը գործում է այն համոզմամբ, որ ԵՆ-ից դուրս ինքը գոյատեւելու ու երկրի զարգացումն ապահովելու համապատասխան ռեսուրսներ ունի, ինչը չեմ կարծում, որ իրատեսական է»:

Ինչ վերաբերում է Գալուստ Սահակեանի յայտարարութեանը, թէ եթէ Հայաստանին ձայնի իրաւունքից գրկեն, կան նաեւ «մուսուլմանական կառույցներ», ընդդիմադիր գործիչն ասաց. «Նա ներկայացնում է ներկայիս իշխանութեան հենք հանդիսացող գլխաւոր խորհրդարանական խմբակցութիւնը եւ այս առումով նրա ասածը անկախ որեւէ բանից դա իշխանութեան ասածն է»:

Իսկ հնարաւոր է, որ ՀՀ իշխանութիւնն ուղղակի չէր հաւատում, որ ձայնից գրկելու ապաւնալիքը ԵՆԽՎ-ն կ'իրականացնի, հարցին էլ արձագանքեց. «Բայց ինչո՞ւ չէր հաւատում, եթէ իրենից հարկւրաւոր անգամներ հօգի պետութեան՝ Ռուսաստանի դէմ ԵՆԽՎ-ն գնացել է նման քայլի: Եթէ Ռուսաստանին, որից 42 տոկոս վազ եւ 37 տոկոս բեկնի են ստանում, գրկել են քուէրակելու իրաւունքից, ինչո՞ւ Հայաստանին պիտի չգրկեն: Եթէ Ռուսաստանի դէմ գնացել են, ապա ինչո՞ւ պէտք է Հայաստանի դէմ չգնան»:

ԱՅՍ ԱՆԳԱՍ «ԱՐՄԱԽԻԱ»ՅԻ A-320-Ը ՎԱՐՈՂԱՑԵԼ Է ԽՈՒՍԱՓԵԼ ՎԹԱՐԻՑ

Կիրակի տեղի ժամանակով մօտաւորապէս 13:00-ի սահմաններում՝ Թբիլիսիից 50-70 կմ հեռավորութեան վրայ (Թբիլիսեան գօտի) «Արմախիա» աւիաընկերութեան A-320 ինքնաթիռը, որն իրականացնում էր Սոչի-Երեւան չուերթը, յայտնուել է A-380 (քաշով մօտաւորապէս 500 տ) հանդիպակաց ինքնաթիռի հոսանքի մէջ: Այդ ինքնաթիռն իրականացնում էր Դուբայ-Նիւ Եորք չուերթը: Օդում ինքնաթիռների միջեւ տարբերութիւնը կազմել է մօտաւորապէս 1000 ֆունտ (մօտաւորապէս 300 մ), ինչը համապատասխանում է բոլոր միջազգային չափանիշներին:

Սակայն «Արմախիա» աւիաընկերութեան ինքնաթիռը յայտնուել է էմիրութիւնների աւիաուղիների Ը-380 ինքնաթիռի հան-

դիպակաց հոսանքում, ինչի պատճառով անջատուել է աւտոդեկը, եւ ինքնաթիռի ձախ թեւը ակամայ թեքուել է մօտաւորապէս 45 աստիճանով: Այդ ամէնը տեւել է 18 վայրկեան, եւ ինքնաթիռը թեքուել է երեք անգամ: Այդ ամէնը գագաթն էր ուղեւորները եւ ինքնաթիռի անձնակազմը: Սակայն «Արմախիա» աւիաընկերութեան օդաչուների բարձր որակաւորման եւ ժամանակին իրականացուած միջնորդութեան շնորհիւ՝ ինքնաթիռն ընդունել է նախկին դիրքը, եւ չուերթը բարեյաջող աւարտին է մօտեցել:

«Արմախիա» աւիաընկերութիւնը «Զուարթնոց» օդանաւակայանում ինքնաթիռի բարեյաջող վայրէջքից յետոյ սկսել է վերձանել թռիչքի համապատասխան չափանիշների ծածկագրերը:

իրականութեան: Ան ըսաւ, որ Հայաստան ոչ թէ մասնակի ազատ երկիր է, այլ ընդհանրապէս անազատ երկիր՝ բոլոր տեսանկիւններէն:

«Ա1+»-ի հետ իր ունեցած հարցազրոյցի ընթացքին Արթուր Սաքունց թուարկեց շարք մը հանգամանքներ, որոնք թոյլ չեն տար իրեն համաձայնելու «Ազատութեան Տուն»-ի մասնագէտներու գնահատականին հետ: Ան չի շատակեց ընդդիմութեան դահիճները չտրամադրելը, երթերն ու ցոյցերը արգիլելը, խօսքի ազատութեան եւ մասնաւորապէս էլեկտրոնային լրատուական միջոցներէն օգտուելու սահմանափակումները:

«Ոչտանգումները Հայաստանում լայն ծաւալ ունեն, այդ թւում՝

նաեւ բռնութիւնները կալանաւորուած անձանց նկատմամբ անկախ քաղաքական հայեացքներից՝ եւ քաղաքական բանտարկեալների նկատմամբ, եւ սովորական քաղաքացիների: Քաղաքատարկեալների առկայութեան պայմաններում Հայաստանը համարել կիսազատ, պարզապէս թիւրիմացութիւն է», - շարունակեց Արթուր Սաքունց:

Արթուր Սաքունցի համաձայն, քաղաքական իրաւունքներու վարկանիշի անկումը արձանագրուած է ոչ թէ Նախագահի ընտրութիւններէն յետոյ, այլ առաջ: «1998թ.-ի պետական յեղաշրջումից յետոյ Հայաստանում ազատութիւն չկայ եւ վարկանիշը Մարտի 1-ին պարզապէս գագաթնակէտին հասաւ, ոչ թէ ընկաւ», - ըսաւ ան:



### ՀԱՐՑԱԶՐՈՅ

## «2009-ԻՆ ՈՒՆԵՆԱՆՔ ՕՐԻՆԱԿԱՆ ԸՆՏՐՈՒԱԾ ԻՇԽԱՆՈՒԹԻՒՆ»

### ԱՐՏԱԿ ԵՂԻՍԱՋԱՐԵԱՆ

Հարցազրույց Սոցիալ-Դեմոկրատ Հնչակեան կուսակցության ատենապետ Լիլիթ Սարգսեանի հետ:

- Տիկին Սարգսեան, 2008թ. Հայաստանի համար դժուարին եւ փորձաքննարկող լի տարի էր: Ի՞նչ փոփոխություններ էք ակնկալում 2009 թուականից:

- Կ'ուզենայի, որ 2009 թուականը մեր ժողովրդի համար լիներ ազգային համաձայնության տարի, որ մեր ժողովուրդը վերջապես թօթափեր բռնապետական ռեժիմը, ունենար օրինական ընտրուած իշխանութիւն եւ իր պահանջները ներկայացնէր այդ իշխանութեանը, տէր կանգնէր իր պահանջներին: Որ վերջապէս կարողանար իրացնել իր սահմանադրական իրաւունքները: Երբեք պէտք չէ սպասել, որ ինչ-որ մէկը քո փոխարէն ամէն ինչ կ'անի:

- 20 օրից էլ կարճ ժամանակ է մնացել ԵւսիՎ յունուարեան նստաշրջանին, որի ընթացքում քննարկուելու է Հայաստանի կողմից թիւ 1609 եւ 1620 բանաձեւերի կատարումը: Որքանով է, ըստ Ձեզ, Հայաստանը կատարելի յիշեալ բանաձեւերի պահանջները:

- Յաւով պէտք է նշեմ, որ եւրոպական կառույցները եւս բացասական ազդեցութիւն ունեցան յետընտրական պրոցէսների վրայ, ճիշդ գնահատականներ չտուեցին եւ, կարծես, ակամայից նպաստեցին գործող իշխանութիւնների յանցագործութիւններին: Դրա արդիւնքում էլ ունեցանք մարտի 1: Ի՞նչն էր պատճառը. Սերժ Սարգսեանը ընտրութիւններից դեռ շատ առաջ Արեւմուտքի հետ պայմանաւորութիւններ էր ձեռք բերել դարաբաղեան ինդրին լուծում տալու համար, եւ, հաւանաբար, հենց դրա համար էլ Արեւմուտքն իր աչքերը փակեց ժողովրդավարութեան նկատմամբ իշխանութիւնների բոլոր ոտնձգութիւնների վրայ: Համոզուած եմ նաեւ, որ Արեւմուտքը ճիշդ չէր գնահատել Համաժողովրդական Շարժումը, Լեւոն Տէր-Պետրոսեանին եւ նրան սատարող ուժերին. հաւանաբար մտածում էին, որ մարտի 1-ից շարժումն աստիճանաբար կը մարի: Ընդգծեմ, որ իշխանութիւնն էլ իսկօք չգտնուեց. եթէ նրանք նման ռեպրեսիւ միջոցների չզրկեմէին, գուցէ իրենց յաջողութիւնը որոշ չափով մեղմել Շարժումը, բայց իշխանութիւններն իրենց ազդեցիկ պահուածքով ակամայ նպաստեցին դրա հզօրացմանը: Մարտի 1-ից յետոյ իշխանութիւնների սանձարձակութիւնը աւելի հզօրացրեց մեր շարժումն ու համոզուածութիւնը, որ մենք ճիշդ ճանապարհ



Հնչակեան կուսակցութեան ատենապետ Լիլիթ Սարգսեան

հով ենք գնում: Ակնյայտ է, որ բանաձեւերում նշուած ոչ մի կէտ չի իրագործուել: Այսօր ունենք մօտ 70 քաղաքատարկեալ, չկայ ժողովրդավարութիւն, չկայ խօսքի ազատութիւն, չկայ հաւաքների եւ երթերի ազատութիւն, օր օրի քաղաքական ճգնաժամը խորանում է, եւ, բնականաբար, այս ամէնը յուշում է, որ ԵՄԽՎ-ն առաջնորդուելով նաեւ սեփական մօտեցումներով, Հայաստանի նկատմամբ սանկցիաներ է կիրառելու:

- Կարծում էք՝ ԵւսիՎ-ն պատժամիջոցներ կը կիրառի, թէ՞ ՀՀ իշխանութիւններին կրկին ժամանակ կը տրամադրի:

- Կարծում եմ՝ ամէն դէպքում ժամկէտները սպառուել են: «7-ի գործը» մեզ յուշում է, որ այս իշխանութիւնը քաղաքական կամք չունի: Չունենալով որեւէ փաստարկ, որով կարող է մարդկանց դատապարտել՝ փորձում է դատական պրոցէսը ձգձգել: Դա ապացուցում է իշխանութեան ծանր վիճակը: Եթէ արդարացնում են մեր 7 ընկերներին, Մարտի 1-ի գոհների արիւնը մնում է իրենց վրայ, ինչից իրենք ուղղակի սարսափում են, իսկ եթէ չեն ազատում, չեն էլ կարողանում նաեւ ապացուցել, որ այդ մարդիկ յանցանք են կատարել կամ նրանց գործողութիւնների ընթացքում մարդ է գոհուել: Իշխանութիւններին հնարաւորութիւն էր տրուել մինչեւ Նոր տարի քաղաքական որոշում կայացնել, համաներում կիրառել: Այդ դէպքում Հայաստանի նկատմամբ աւելի մեղմ կը վարուէին, սակայն ակնյայտ է, որ իշխանութիւններն աւելի շատ սարսափում են քաղաքատարկեալների ազատութեան մէջ յայտնուելուց, եւ անեւանելի վիճակում լինելով՝ չեն կարողանում տրամաբանուած որոշումներ կայացնել:

Մար. ք էջ 18

## «10 ՏԱՐՈՒԱՅ ՔՈՉԱՐԵԱՆԻ «ԶԱՐԳԱՅՐԱԾ» ՏՆՏԵՍՈՒԹԻՒՆԸ 2 ԱՄՍՈՒՄ ՔԱՆԴՈՒԵՑ»

### ԶՐՈՒՑԵՑ ԴԻԱՆԱ ՄԱՐԿՈՍԵԱՆԸ

Մինչ աշխարհում ելքեր են փնտրում ֆինանսական ճգնաժամը չարթաւարելու համար, մեզանում կառավարութիւնը գնում է անտրամաբանական քայլերի՝ մասնաւորապէս մեծացնելով հարկային բեռը: Այս եւ «Ա1+»-ի այլ հարցերի պատասխանում է ՀՀ նախկին վարչապետ Հրանդ Բազրատեանը:

- Չե՞ր կարծիքով, ինչպէ՞ս փակուեց տնտեսական տարին Հայաստանի համար:

- Վերջին ամիսներին, յատկապէս Հոկտեմբեր-Նոյեմբերին պաշտօնական վիճակագրութեամբ ամսական ՀՆԱ-ի անկումը նախորդ տարիների նոյն ժամանակահատուածի հետ համեմատած, մօտ 45 տոկոս է կազմել. Դեկտեմբերին անկումը շարունակուել է: Պէտք է նկատել, որ նոյեմբեր եւ դեկտեմբեր ամիսները ՀՆԱ-ի իմաստով բարձր արտադրողականութեան ամիսներ են, հենց այս ժամանակահատուածում է արտադրում ՀՆԱ-ի մի զգալի մասը, աւելին, քան երկու ամսուայ համամասնութիւնն է: Օրինակ, միայն նոյեմբեր ամիսին գիւղատնտեսութեան համախառն արտադրանքը ամսական կտրուածքով երկու անգամ պակասել է, դա առնուազն գիւղատնտեսութեան ոլորտի համար նշանակում է, որ իջել ենք 1992 թուականի մակարդակին. չեմ ասում 93-94, որովհետեւ դրանք արդէն բարեյաջող տարիներ էին, որտեղ ուժեղ կառավարութիւն կար եւ բարեփոխումներ էին իրականացուում: (Յիշեցնենք, որ 1992 թուականին վարչապետ են եղել Գագիկ Յարութիւնեանն ու Խոսրով Յարութիւնեանը.): Մօտ 40 տոկոսով պակասել է արտահանումը, մինչդեռ տարեվերջ է, եւ արտահանման պայմանագրերը հենց այդ ամիսներին են կատարում:

Այս տեսակէտից դեռեւս չկան Դեկտեմբերի տուեալները, բայց մեր ունեցած տեղեկութիւններով՝ վիճակը շարունակում է խորանալ: Գործնականում, մենք եթէ տարին փակում ենք լաւագոյն դէպքում 1 մլրդ դոլար արտահանմամբ, եւ եթէ նկատի ունենանք արտահանման գները աճը, ապա այդ արտահանումը զգալիորէն պակաս է 1996 թուականի արտահանման ծաւալներինց:

- Ես կ'ուզենայի, որ այս բացարձակ ճշմարիտ փաստը պարզապէս հրապարակաւ հնչեցուէր եւ լսեր նախ Ռոբերտ Քոչարեանը, թէ իր 10 տարի գարգացրած տնտեսութիւնն ինչ եղաւ 2-3 ամսում, ապա նաեւ այսօրուայ իշխանութիւնը:

- Իսկ որքանով է կապուած Հայաստանը



ՀՀ նախկին վարչապետ Հրանդ Բազրատեան

յաստանում տնտեսական ճգնաժամը միջազգային ճգնաժամի հետ:

- Շատ չնչին: Մեր ճգնաժամի միայն մի քանի տոկոսն է պայմանաւորուած համաշխարհային ճգնաժամով: Հիմա մեզ մօտ այն ճգնաժամն է, որի պատճառը ԿԲ-ի կողմից երեք տարի առաջ սկսած դրամի արժեւորման քաղաքականութիւնն է՝ Տիգրան Սարգսեանի ղեկավարութեամբ: Հիմա արտահանումը լրիւ կանգնել է. այսինքն, մենք ի վիճակի չենք որպէս ազգ մի որեւէ ապրանք արտադրել եւ վաճառել, հիմա դրա համար մեր գլխին հեքիաթներ են կարդում, թէ պէտք է ծառայութիւններ վաճառենք:

- Այսինքն, մեր ճգնաժամը մեծապէս կախուած է վարուող տնտեսական քաղաքականութիւնից:

- Այո: Ճգնաժամը գալիս է փաստելու, որ պէտք է քաղաքականութեան մէջ որոշակի փոփոխութիւններ կատարել, նախորդ գարգացումներն այնքան վատն էին, որ պէտք է անշուշտ փոփոխութիւններ անել: Իսկ թէ ինչպիսի փոփոխութիւններ են պէտք, ես բազմիցս մամուլով ասել եմ՝ ոլորտ առ ոլորտ:

- Սիջազգային ճգնաժամը խոստանում է իր գագաթնակէտին հասնել մարտ-ապրիլ ամիսներին, մեզանում էր կը լինի ճգնաժամի գագաթնակէտը:

- Նորից եմ ուզում շեշտել, որ այսօրուայ Հայաստանի, Ռուսաստանի եւ Ուկրաինայի ճգնաժամերի հետ միջազգային ճգնաժամը կապ չունի, այդ երկրներում գնում է իրենց ճգնաժամը՝ կառուցուածքային: Միջազգային ճգնաժամն ուղղակի իւթանց, արագորէն ջրի երես հանեց այն հիւանդութիւնները, որով այդ երկրները տառապում էին, յատկապէս Հայաստանը:

Մար. ք էջ 18

ՏԵՄՔՔ  
ԵՌԹ  
BANKRUPTCY-Ի  
ՕՐԵՆՔՆԵՐԸ  
ԿՕԳՆԵՆ ՁԵՁԻ,  
ԶԱՆԳԱՅԱՐԷՔ

## JANSEZIAN LAW FIRM, PC

If you're facing overwhelming debts, bankruptcy laws may eliminate all your debts permanently!

225 South Lake Avenue, Third Floor, Pasadena, California 91101

Call Now for a FREE Consultation: 626-432-7209



Nazareth V. Jansezian, Esq.



ՔԱՂԱՔԱԿԱՆ

ԿԱԶԱ, ԻՍՐԱՅԷԼ, ՕՊԱՄԱ

ՅԱՐՈՒԹԻՒՆ ՍԱՂԻՆԱՆ

Մինչև Դեկտեմբեր 27, 2008 թվականին, Իսրայելի որոշ համբերություններ տարած էր Կազային «Համաս» կազմակերպության կողմից, Իսրայելի որոշ քաղաքներում վրայ արձակուրդ հրթիռները: Այս հրթիռները կրկին անգամ սկսած էին իջնել քաղաքներում եւ գիւղերում վրայ, Եգիպտոսի կողմից Կազայի եւ Իսրայելի միջև կնքուած գինադադարի մը աւարտին: Շատ ալ յստակ չէ թէ Կազայի իշխանութիւնը իր ձեռքերում մէջ ունեցող «Համաս»ը ինչո՞ւ վերսկսած էր հրթիռային արձակումները: Օրական շուրջ 60-80 թիւով հրթիռներ կ'իջնէին հրէական սահմանային բնակիչներու վրայ, երբեմն անվնաս, երբեմն ալ մարդկային եւ ստացուած քային վնասներ պատճառելով: Այս նորագոյն բռնկումին կը թուի թէ Իսրայելի իշխանութեանց համբերութիւնը վերջ գտած էր եւ Իսրայելեան ներխուժումը, բաւական լուրջ ծրագրուած կերպով սկսած տեղի ունենալ Կազայի վրայ: Նախ օդանաւային եւ հելիքոփթերային ուժակոծումներով, իբրեւ թէ «Համաս»ի ղեկավարներուն եւ գինուորական հաստատութեանց վրայ, եւ սակայն, անխուսափելիօրէն, ժողովուրդի վրայ նաեւ, որոնց իբրեւ արդիւնք, մեռնողներ մէկ կարելոր տոկոսը, անմեղ մարդիկ էին, կիներ եւ մանուկներ: Ըստ երեւոյթին, Իսրայելի ամիսներու վրայ երկարող պատրաստութենէ մը ետքն է որ իր գինուորական ծրագիրը սկսած էր գործի դնելու: Այսպէս, օդային ուժակոծումներէն ետք, Իսրայելեան բանակը, ամենագորաւորը Միջին Արեւելիքի մէջ, պիտի անցնէր իր ծրագրի երկրորդ փուլին, որ կը հանդիսանար բանակի մուտքը, բանակով եւ հրասայլերով, ուղղակի Կազայի հողամասէն ներս, գայն երկուքի բաժնելով, եւ բնակչութեան վրայ հուժկու ուժակոծումներով: Մինչեւ այս սողերը գրուելը, արդէն շուրջ 900 մեռեալ եւ հազարաւոր վիրաւորներ կը հաշուեն զոհերը, պաղեստինեան բնակիչներէն, «Համաս»ի կռուողները եւ անմեղ ժողովուրդ, որոնց մէջ նաեւ դպրոցական աշակերտներ, որոնք կը գտնէին ՄԱԿ-ի կողմէ ղեկավարուող դպրոցէ մը ներս: Իսրայելեան բանակը այսպիսով անխնայ ուժակոծումի կ'ենթարկէր Կազան, մարդկային եւ նիւթական ահաւոր

վնասներ հասցնելով արդէն իսկ աղքատութեան ճիրաններուն մէջ տուայտացող ժողովուրդին: Նաեւ հրեայ բանակի 13 գինուորներ զոհ պիտի երթային տեղի ունեցող ընդհարումներու պատճառաւ:

Ուրեմն, ցարդ Իսրայել կը նկարագրէ թէ իրենց ծրագրին առաջին եւ երկրորդ հանգրուանները վերջացուցած է, եւ կրնայ որեւէ ատեն անցնիլ երրորդ եւ յաջորդ հանգրուաններուն, որոնց մասին տակաւին որեւէ տեղեկութիւններ չկան: Յարդ ուրեմն, ըստ արտաքին աշխարհին հասնող լուրերու, Իսրայել Կազայի շրջանին պատճառաւ է լուրջ մարդկային եւ «Համաս»ային վնասներ, ինչպէս նաեւ փակած հարիւրաւոր փախուղիներ (tunnels) Կազայի եւ Եգիպտոսի միջև, ուրկէ Կազան կը պարենաւորուէր անհրաժեշտ սննդապատրաստութեան գէներով: Պէտք է հոս յիշել որ, հակառակ Իսրայելեան բանակի ներժուխուժմին, «Համաս»ի հրթիռները, առանց դադարի, կը շարունակեն տեղալ հրէական քաղաքներու եւ գիւղերու վրայ, յատկորէն ցոյց տալով որ «Համաս»ն ալ գերծ չէ որոշ ծրագրումէ եւ պատրաստութենէ:

\*\*\*

Մինչ գինուորական այս քանդիչ գործողութիւնները տեղի կ'ունենան, գինադադար մը հաստատելու ճիգերը զուգահեռաբար կը շարունակուին, նախ Ֆրանսայի նախագահ Նիքոլա Սարքոզիի եւ Եգիպտոսի նախագահ Հիւսէյն Մուպարաբի, եւ ապա, ՄԱԿ-ի Ապահովութեան Խորհուրդի կողմէ, որուն նաեւ կը մասնակցի Ամերիկայի Միացեալ Նահագները: Հետաքրքիր կանխարձեռն է որ երկու կողմերուն ալ, թէ «Համաս»ը եւ թէ Իսրայել, գէթ առ այժմ որեւէ տրամադրութիւն ցոյց չեն տար լուրջ գինադադար մը կնքելով, վերջ տալ գինուորական գործողութեանց, եւ ուրեմն տեղի ունեցող ահաւոր վնասներուն Իսրայել կը պնդէ որ վերջ պիտի տայ «Համաս»ի հրթիռային արձակումներուն, նաեւ լուրջ մահ պատճառելով «Համաս»ի կռուողներուն, եւ իբրեւ թէ ինչպէս լուրջ 1.5 միլիոն բնակչութիւն ունեցող Կազայի բնակիչներուն:

Անդին «Համաս»ի ղեկավարութիւնը, Կազայէն ներս թէ Դամասկոսի մէջ, կը յայտարարեն որ պիտի պայքարին մինչև վերջին գինուորը, եւ ահաւոր վնասներ



պիտի պատճառեն հրէայ բանակին:

Առ այժմ այս կը թուի ըլլալ իրերու վիճակը պատերազմական գետնի վրայ: Իբրեւ արդիւնք Կազայի անմեղ բնակչութեան վրայ տեղի ունեցող վնասներուն, մտահոգիչ եւ վտանգաւոր զարգացումներ է որ տեղի կ'ունենան աշխարհի տարբեր շրջաններէն եւ երկիրներէն ներս, Եւրոպայէն, Միջին Արեւելէն մինչև Ասիական բազմաթիւ երկիրներ, ուր ցոյցեր տեղի կ'ունենան, երբեմն հարիւր հազարաւոր մարդոց մասնակցութեամբ, պահանջելով Իսրայելեան բանակի գործողութեանց վերջ տալու, յատկապէս ինչպէս անմեղ բնակչութեան մօտ զոհերու թիւին առաւել եւս բարձրանալուն: Յարդ, ինչպէս ըսուեցաւ ոչ քաղաքական միջամտութիւնները, եւ ոչ ալ հակա-Իսրայելեան ցոյցերը որեւէ շօշափելի արդիւնքի չեն հասած: Մէկ կողմէ Իսրայել կ'ուզէ կազմալուծել «Համաս»ը, իր բնակիչները գերծ պահելու հրթիռներէ, իսկ միւս կողմէ, «Համաս» կը պնդէ վերջ տալ Իսրայելեան շրջափակումին, որպէսզի անտեսական կեանք սկսի բնականոն դառնալ: Արժէ յիշել նաեւ որ որոշ ցոյցեր նաեւ ուղղուած են արաբական որոշ կառավարութեանց եւ ղեկավարներուն, որոնց մեղմ, եւ չափաւոր մօտեցումները կը նկարագրուին իբրեւ «դաւաճանութիւն» եւ մեղսակցութիւն Իսրայելեան պետութեան: Յատկապէս նաեւ թիրախ են ամերիկեան դեսպանատուները, քանի որ Ամերիկա կը նկատուի, Իսրայելի դաշնակիցը, մասնաւոր Իրայելեան բանակի գինուորական մթերքի հայթայթիչը:

\*\*\*

Մինչև հոս, Կազան եւ Իսրայելը բաւականին յստակ կը դառ-

նան: Ինչ որ Իսրայելի համար, ըստ երեւոյթին, տակաւին յստակ չէ որ, ինչպէս 2006 թվականին, Լիբանանի մէջ «Հըզպալլա»ի հետ իր ընդհարումին իբրեւ արդիւնք, ինք անկարող եղաւ իր սկսկալած յաղթանակը ձեռք ձգել, հոս եւս, Կազայի մէջ, «Համաս»ի պարագային, Իսրայել անկարող է «վերջնական» յաղթանակի մը մասին խօսիլ, նոյնիսկ եթէ գինադադար կնքուի, եւ «Համաս» դադրի հրթիռներ արձակել: Այնքան ատեն որ արաբ-Իսրայելեան 60 տարիէ ի վեր գոյութիւն ունեցող տագնապը իր վերջնական լուծումը եւ անոր արդիւնք հաշտութիւն չունենար, պարբերական բռնկումներ անպակաս պիտի ըլլան: Նման բռնկումներու լուծում գինուորականէն աւելի, քաղաքական են, եւ այնքան ատեն այդ քաղաքական լուծումներու փնտրուածքը կ'ուշանայ, պարբերական բռնկումներ անխուսափելի են:

\*\*\*

Այս յօդուածին խորագրէն ներս գետեղեցինք նաեւ Ամերիկայի ընտրեալ նախագահ Պարաք Օպամայի անունը: Ինչո՞ւ յարմար տեսանք այս ընել: Պատճառը շատ յստակ է: Ամերիկեան քանի մը օրէն, Յունուար 20-ին 2009 թվականին, կ'ունենայ նոր իշխանութիւն մը, նոր նախագահով մը որ Պարաք Օպաման է: Յստակ էր որ մինչև իր նախագահական երդումը, Յունուար 20ին, Օպամա կը պնդէր որ երկիրը մէկ նախագահ կրնար ունենալ, եւ այդ նախագահը ցարդ ճօրճ Պուշին է, որ պատասխանատու կը մնայ արտաքին քաղաքականութեան համար: Իսկ ամէն մարդ գիտէ թէ որքան Պուշ, միակող-

Շար.ք էջ 19



**A.B.A. INSURANCE SERVICES**

Life, Health, Group Health, Disability, Long Term Care

Blue Cross of California 1975-2008 Blue Shield of California

**33<sup>th</sup> ANNIVERSARY**

## ԱՊԱՌՈՎԱԳՐՈՒԹԻՒՆԸ ԱՆԵՐԱԺԵՇՏ Է

ԵՐՔԵՔ ՈՒԾ ՉԷ ՎԵՐԱՔՆՆԵԼՈՒ ՁԵՐ ԱՊԱՌՈՎԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ

# ՊԵՏՐՈՍ ՄԱՐՈՆԵԱՆ

818 500-9585 ABA INSURANCE SERVICES 805 E. Broadway . Glendale, CA 91205

E-mail: BMaronian@AOL.com ONE EIGHT HUNDRED FOUR "HAI-TAD"





# ԲԱՂԱՔԱԿԱՆ

## ԲԱՂԱՔԱԿԱՆ ԵՐԳԻՆԱԵ ԱԿԱՆՋԸ ԽՕՍԻ ԲԱՖՔԱՅԻՆ...

### ՍԱՀԱԿԹՈՒԹՅԱՆ

Փրանց Քաֆքայի ընթերցողները շատոնց գիտեն թէ այս մոլորակի վրայ ենթաշխարհներ կան ուր «ինչու» հարցումը խստիւ արգիլուած է: Ուրեմն նման հարցում պէտք է որ ընեն, քանի համոզուած են թէ գոհացուցիչ կամ բաւարարող պատասխան պիտի չստանան: Արդէն իրենց բառարաններուն մէջ ալ այդպիսի «տերմին» գոյութիւն չունի:

Այսպէս, Քաֆքայի «Այլափոխութիւնը» (The Metamorphosis) վէպի գլխաւոր անձը՝ Կրեկոր Սամսա, առաւօտ մը կ'արթննայ ու կը տեսնէ թէ ինք ուտիճ միջատ մը (cockroach) դարձած է: Մի' հարցնէ՞ք՝ ինչո՞ւ: Դուք վարժուած էք պատասխանի մը սպասելու միշտ: Այդ ձեր երեւակայութեան արգասիքն է: Այդպիսի յատակ պատասխաններու աշխարհի մը մէջ է որ կ'ապրի մեր ժամանակակից ազատ ու անկախ սերունդը: Ու դեռ կը պնդէ՞ք թէ չհասկցաք: Կրնաք նոյնպէս հարց տալ թէ ինչո՞ւ Երեւանի բանտերը խճողուած են բազմաթիւ ազգային հերոսներով, անձնուէր ազատամարտիկներով, ազգային ժողովի պատգամաւորներով ու հասարակական ազնիւ գործիչներով որոնց միակ մեղքը Ռոբերտ Քոչարեանի կամ Սերժ Սարգսեանի նման չմտածելն է: Կրնաք մինչեւ ժամանակի վախճանը պնդել թէ անոնք քաղաքատարկեալներ են: Քոչար-Սերժեան հոմանիչներու բառարանին մէջ այլախոսութիւնը ինքնին քրէական յանցանք է, եւ քաղաքական այլակարծութիւնը՝ ոճրագործութիւն: Իսկ «մտածել» բայը որեւէ տեղ է չիշուած այդ բառարանին մէջ, ինչպէս որ «քաղաքական բանտարկեալ» հասկացութիւնը որեւէ տեղ է նշուած ազատ-անկախ Հայաստանի Սահմանադրութեան մէջ: Հետեւութիւնը շատ յստակ է: - Նորագոյն, 21-րդ դարու Հայաստանի համայն հողատարածքի վրայ ազնուօրէն մտածելն ու անկախ կարծիք ունենալը քրէական ամենաստոր յանցագործութիւնն է:

Ուրեմն իմ, քու, մեր հասկնալը կամ չհասկնալը ոչինչ կը փոխէ Քոչար-Սերժեան քաֆքայական գլխավայր շրջուած հոմանիչներու բառարանէն: Եւ կամ՝ Սահմանադրութեան իրենց բիւզանդական ծուռ մեկնաբանութիւններու մրցանիչ կոտորող անհեթեթութիւններէն: Վե՛րջ ինչուն երոտն: Քոչար-Սերժիստանի սահմաններէն ներս հասկնալը կամ չհասկնալը ոչ մէկ նշանակութիւն ունի հոն ի գորու եղող ապօրինաչափութիւններու դէմ: Այնտեղ, երէկ, ձեր անունը կրնայ եղած ըլլալ Տիգրան Թորոսեան, Տիգրան Սարգսեան (ի՞նչ կարեւորութիւն թէ՞ ո՞ր Տիգրանը), Վարդան Օսկանեան (նոյնիսկ եթէ աւելցնենք Մամիկոնեանի ուրուականը), Գազիկ Մառուկեան (իր միլիոններով հանդերձ), կամ Տոտիկ Ակօ, Թոնմախի Մհեր, թէկուզ Մո՛ւկը:

Բայց այս բոլորը ձեզի պոստիկ մը օգուտ չունին այսօր: Այս առաւօտ դուք, Հայաստանի մեծ կամ միջակ կամ փոքր որեւէ քաղաքացի, ոչ-քաղաքացի, հերոս, ազատամարտիկ, ապրող կամ Եռաբլուրի դիւցազնական ննջեցեալ, ուզէ՞ք թէ չուզէ՞ք, կրնաք արեւի առաջին շողերուն հետ դուք ձեզ այլակերպուած տեսնել որպէս ուտիճ, բզէզ, փայտօղի, կամ որեւէ այլ միջատ կամ ճճի: Ու դեռ կը համարձակի՞ք հարց տալ թէ ինչո՞ւ, ինչպէ՞ս, ի՞նչ տրամաբանութեամբ: Դուք մոռցա՞ք թէ Քոչար-Սերժիստանի մէջ տրամաբանութիւնը ժամանցուած թիւրիմացութիւն է: Ուրեմն վե՛րջ բոլոր անփափկանկատ, անպատկառ հարցումներուն: Կարեւորը՝ քաղաքացիական պարտականութիւն է ամէն մէկուն գիտակցիլը թէ ինք ի՞նչ միջատ է կամ ճճի:

Այսօր Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան ներկայացուցիչները Ամենայն Հայոց Կաթողիկոսութեան հետ պաշտօնական երկխոսութիւնների ժամանակ եւ այլ առիթներով ընդունում եւ յայտարարում են, որ այն ամէնը, ինչ եղաւ 1955-56 թթ.-ից չեսոյ, արդիւնք էր այն ժամանակուայ քաղաքական եւ գաղափարական խմորումների՝ բխած պահի անհրաժեշտութիւնից, որը պիտի սրբազրուի, սրբազրում, որը, սակայն ժամանակի կարօտ է:

Մայր Աթոռը ըմբռնումով է մօտենում այս ինդրին: Սակայն, երբ պաշտօնական կերպով նշուած է այդ սխալը՝ «Ազգային Առաջնորդարանի Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան հովանաւորութիւնը ընդունելուն 50-ամեակը... ինչպէս նաեւ Ամերիկայի ցամաքամասին վրայ Հայաստանեայց Եկեղեցւոյ Ազգային Առաջնորդարանի 110-ամեակը, նշանակում է՝

ա. Մի կողմից, այնպէս է ստացուում, որ 50 տարի առաջ Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութիւնը առե-

րեն այլ բան է ասում, ծածկուած կերպով՝ այլ քաղաքականութիւն իրագործում, որով եւ այդ Աթոռի ներկայացուցիչների խօսքերն ու խոստումները անկեղծ չեն, ուստի եւ անարժէք ու անվստահելի:

բ. Միւս կողմից, այնպէս է ստացուում, որ 50 տարի առաջ Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութիւնը ոչ միայն մի բաժանում է մտցրել ԱՄՆ-ի Հայոց թեմի մէջ եւ իր կողմից գաւթուած մասով հակակառնական թեմ ստեղծել, այլ նաեւ իրեն համարում է իրաւատէրը եւ ժառանգորդը 110 տարի առաջ Ամենայն Հայոց Կաթողիկոսութեան կողմից ստեղծուած ԱՄՆ-ի Հայոց թեմի:

Օշական Սրբազանի պատգամի մէջ տեղ են գտել մի շարք պատմական անճշտութիւններ եւ եղելութիւնների դիտաւորեալ խեղաթիւրումներ, որոնց ցանկանում ենք անդրադառնալ շատ համառօտ կերպով.

1. Արդարացնելու համար Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան գոյութիւնը, պատգամախօսը համանման վկայութիւն-ապացոյց է բերում 6-րդ դարից, հետեւեալ բառերով. «Այստեղ անհրաժեշտ է նշել, որ հայկական միահեծան եւ միաձոյլ իշխանութեան չզոյլութեան պատճառով եւ երբեմն այլ ժողովուրդներու եւ կրօնքներու աշխարհագրական վայրերուն մէջ մեր ժողովրդին գտնուելուն բերումով, ունեցած ենք զուգահեռ կաթողիկոսներ, որոնց մահէն ետք դադրած է աթոռի շարունակութիւնը, ինչպէս Մօրիկ կայսեր օրով (590-ին) երկուքի բաժնուած Հայաստանի յոյներու Աւան քաղաքին մէջ»:

Վստահե մ, որ Օշական Սրբազանը լաւ գիտէ, որ Աւանի Կաթողիկոսութիւնը ստեղծուել է ոչ միայն «Մօրիկ կայսեր օրով», այլ Մօրիկ կայսեր կողմից՝ քաղկեդոնականութիւնը հայ ժողովրդին պարտադրելու մտադրութեամբ:

Աւանի Կաթողիկոսութիւնը քաղկեդոնական կաթողիկոսութիւն էր, ոչ մի կապ չունէր հակաքաղկեդոնական Հայաստանեայց Սուրբ Եկեղեցու հետ եւ այդ պատճառով էլ մերժուեց հայ ժողովրդի կողմից եւ առաջին Կաթողիկոսի մահուամ էլ վերջացաւ: Միայն սրտից ցաւ կարելի է գգալ, երբ Աւանի Կաթողիկոսութիւնը «զուգահեռօրէն» համեմատուած է Հայոց Աթոռի հետ:

2. Անդրադառնալով 1441 թ.ի Հայոց Հայրապետական Աթոռի Ս. Էջմիածնի վերահաստատման իրողութեանը՝ պատգամախօսը ասում է. «Կիլիկիոյ թագաւորութեան անկումէն ետք, 1375-ին, քաղաքական կացութիւնը վատթարացած էր: Արեւելեան վարդապետները Հայ Եկեղեցին դուրս բերելու համար լատինական ճնշումներէն եւ ազդեցութիւններէն, ինչպէս նաեւ ենթարկուելով պարսիկ խաներու միջամտութեան եւ ճնշումներուն, ինչպէս կը վկայէ թովմա Մեծփեցի, «Հրաման եղել ի բռնաւորէն օրհնել կաթողիկոս, առանց հակառակութեան» դիմեցին Կիլիկիա գտնուող Գրիգոր Մուսաբեկեան Կաթողիկոսին, որ Աթոռը փոխադրէ Ս. Էջմիածին, Աթոռին առաջին նստավայրը: Սակայն Գրիգոր Կաթողիկոս մերժեց եւ միւս կողմէ՝ չառարկեց նոր ընտրութիւն մը կատարելուն վրայ Ս. Էջմիածնի մէջ: Ուստի 1441-ին Էջմիածնի մէջ կաթողիկոս ընտրուեցաւ բարի նկարագրով վանական մը՝ Կիրակոս

Վիրապեցի վարդապետը, երբ Կիլիկիոյ մէջ կը բազմէր Հայոց Կաթողիկոսը:

Այստեղ չենք ուզեր մտնել գաղափարական մէջ, ոչ Արեւելեան վարդապետներու մտադրութեան եւ նպատակներու հետապնդման, ոչ այլ Գրիգոր Մուսաբեկեան Կաթողիկոսի որոշումներուն եւ վերաբերմունքին մասին, այլ կը գոհանանք՝ հաստատելով, որ թէ Հայաստանի մէջ եւ թէ Կիլիկիոյ մէջ գտնուող հայութեան համար անհաժեշտութիւն նկատուեցաւ ունենալ երկու կաթողիկոսներ, ինչպէս նախապէս այլ պատահած էր եւ փորձառութիւնը ունէինք զուգահեռ կաթողիկոսներու»:

Ցանկանում ենք պարզապէս չիշեցնել Օշական Սրբազանին եւ մեր յարգարժան ընթերցողներին.

ա. Հայ Եկեղեցու Գերագոյն իշխանութիւնը Ազգային-Եկեղեցական ժողովն է:

բ. 1441 թ.-ին Ս. Էջմիածնում գումարուած, 2500 պատգամաւորներից բաղկացած, Ազգային-Եկեղեցական ժողովը որոշում ընդունեց Հայրապետական Աթոռը վերահաստատելու Ս. Էջմիածնում, Սսից փոխադրել Սուրբ Էջմիածին:

գ. Նոյն Ազգային Եկեղեցական ժողովը հրաւէր ուղարկեց Հայոց Հայրապետ՝ Երջանկայիշատակ Գրի-

Շարք էջ 19



## ՅՈՐԵԼԵԱՆԱԿԱՆ ՀԱՆԴԻՍՈՒԹԻՒՆ Նուիրուած արձակագիր ՍՏԵՓԱՆ ԱԼԱԶԱԶԵԱՆԻ ԾՆՆԴԵԱՆ 85-ԱՄԵԱԿԻՆ

Կազմակերպութեամբ՝  
Հայկական Բարեգործական Ընդհանուր Միութեան  
Թէքեան Մշակութային Միութեան  
Համագգային Կրթական եւ Մշակութային Ընկերակցութեան  
Նոր Մեքունդ Մշակութային Միութեան

Վկայութիւններ  
ՍԻԼՎԱ ԿԱՊՈՒՏԻՎԵԱՆ  
ԱԿԱԳԵՄԻԿՈՍ ԼԵՒՈՆ ՀԱՍՎԵՐՏԵԱՆ  
ԱԿԱԳԵՄԻԿՈՍ ՍԵՒԱԿ ԱՐՁՈՒՄԼՆԵԱՆ  
ԱԿԱԳԵՄԻԿՈՍ ԵԳՈՒԱՐԳ ՋՐԲԱՇԵԱՆ

Ելոյթ կ'ունենան  
ՓՐՈՅ. ՕՇԻՆ ԲԵՇԻՇԵԱՆ  
ՎԱՅԷ ՍԵՄԵՐՃԵԱՆ

Հանդիսավայր՝  
ՏՈՔԹ. ԿԻՐԱԿՈՍ ՄԻՆԱՍԵԱՆ  
Գեղարուեստական յայտագիր  
Ասմունք՝ ՆՈՒՆԷ ԱՒԵՏԻՍԵԱՆ  
ԻՐԱՆԱԶԱՅ ՄԻՈՒԹԵԱՆ ԵՐԳՉԱՅՈՒՄԵ  
Ղեկավար՝ ՄԻՔԱՅԷԼ ԱՒԵՏԻՍԵԱՆ  
ԼԵԼԵԱ ՊԱՐԱՆՈՒՄԵ  
Պարուսոյց՝ ԼԵԼԵԱ ՄԱՐԳԱՐԵԱՆ

ԿԻՐԱԿԻ, 8 ՓԵՏՐՈՒԱՐ, 2009, Կ.Ե. ԺԱՄԸ 6:00-ԻՆ  
Հայաստանեայց Եկեղեցւոյ Արեւմտեան Թեմի  
Առաջնորդարանի Գալայճեան սրահին մէջ  
3325 N. Glenoaks Boulevard, Burbank

ՄՈՒՏՔԸ ԱԶԱՏ



# ՎԱՅԱՆ ԹԵՔԵԱՆԻ ԲԱՆԱՍՏԵՂԾԱԿԱՆ ԱՇԽԱՐՀՈ

## ՄԱՐԳԻՍ ՎԱՀԱԳՆ

«Յոգիս իմն է եւ որքան թուիմ յանձնել զայն այստեղ  
Անցորդներուն անձանօթ, իւրա-  
քանչիւր էջի վրայ,  
Յոգիս իմն է եւ ոչ ոք պիտի ամ-  
բողջ զայն ճանցնայ  
Իր լոյսերովը պայծառ, իր մթու-  
թեամբը ահեղ...»:

Յոգիս հանքի մ'է նման-ոսկի՞,  
ածո՞ւխ թէ պակար  
Որուն հազիւ հեղեղներ քրքրե-  
ցին խաւը վերին,  
Մերթ հրճուանքի ու յաճախ սեւ  
հեղեղները ցաւին,  
Մինչ հրաբուխ մը խորունկ անոր  
ներքեւ կը գոռար...»:

Այս ստղերէն աւելի խտացուած  
եւ ճշգրիտ, բայց նաեւ ինքնաճանա-  
չում պերճախօս եւ ինքնաբնութագ-  
րում, կարծեմ, կարելի պիտի չըլլար  
բանաձեւել: Ամբողջական Թէքե-  
անն է այս, սեղմ, կուռ ու պերճա-  
գեղ, միանգամայն սրտբաց ու կուրպ՝  
«իր լոյսերովը պայծառ եւ մթու-  
թեամբը ահեղ»: Յաւի, վիշտի ու  
տառապանքի փոթորկացող ներաշ-  
խարհ մը, իրը՝ որ ուրիշներուն մօտ,  
պիտի կրնար բարձրադաղակ ժայթ-  
քել, բայց որ Թէքեանի մօտ, պիտի  
հունաւորուէր արտաքինապէս հան-  
դարտ ու խաղաղ հոսքով մը, գուսպ  
ու մեղմանոյշ, սրտառուչ եւ սիրտա-  
բարձր մինչ անտես «հրաբուխ մը  
խորունկ անոր ներքեւ կը գո-  
ռար...»: Այս երկուութիւնը երկբա-  
յութիւն է՝ թէքեանի մօտ, այլ  
հաստատ գիտակցութիւնը՝ հակոտն-  
եայ ուժերու եւ տարրերու բախու-  
մով յառաջացած իր ներքին տրա-  
մաթիւզմին: Անոր հոգիին ծալքե-  
րուն մէջ մղուող ահաւոր գուպարին  
ամօթիած սա դրսեւորումը, հեռու  
ցուցադրական ամէն ճիգէ եւ հոստո-  
րական հրապարակումէ, կը բնորոշէ  
Թէքեանին, իր ժամանակին եւ  
նոյնիսկ ներկայիս հասկցուած չըլ-  
լաւ խոր ցաւն ու դառնութիւնը: Եւ  
ասիկա՝ կեանքի իր երկու բեւեռնե-  
րուն՝ անձնական-սիրային եւ հասա-  
րակական-հայրենական մարզերուն  
մէջ հաւասարապէս:

Անձնական կեանքի հոլովոյթը,  
կանուխէն, ներգրաւուած է սիրոյ  
բազմերանգ բռնկումներով: Միրա-  
յին երգերը իր երկին գլխաւոր  
առանցքը կը բաղկացնեն: Թէքեան  
եղած է մեր մեծագոյն սիրերգակ  
քերթողը: Իսկ իր սիրային երգե-  
րուն մեծագոյն մասին յաջող կերտ-  
ուած քն ու յուզական լիցքը, անոնց  
մեղմ ու առինքնող եւ սրտմանոյշ  
թախիծը պատճառ հանդիսացած են  
որ ինք, ընդհանրապէս բնորոշուի  
որպէս ցաւած, մերժուած կամ անել  
սիրոյ երգիչը, եւ կամ ալ նոյնիսկ՝  
գոյութիւն չունեցած, ոգեղինացած,  
անմարմին սիրոյ քնարերգուն: Ճիշտ  
է, Թէքեանի սիրային երգերը ունին  
քնշքութեան, զգայնութեան մեղմ  
ու երազային այդ պարունակը՝ թանձր  
թաւուտներուն ներքեւ գլխացող  
վճիտ ակնադիւրի մը հազիւ լսելի  
կարկաչով մեղմօրօք: Բայց տակա-  
ւին այդ չի նշանակեր թէ իր սէրերը  
եղած են անմարմին, երեւակայական  
էակի մը ձօներգուած միայն, եւ կամ,  
լոկ սիրոյ ընդհանրական գաղափա-  
րին նուիրուած: Ընդհակառակը,  
օրինակի համար, երբ ան կը գրէ  
սիրային քերթողութեան իր գլուխ  
գործոց «Բու յիշատակը, այս գի-  
շեր, գիս լալու չափ կը յուզէ...»ն,  
այդ միատողին «յիշատակ», «գի-



շեր» եւ «լալու չափ» բառապատ-  
կերներով կը ստեղծէ տրամադրու-  
թիւն մը, մթնոլորտ մը ուր թա-  
խիծն ու քնշքութիւնը կը թեւածեն  
օդին մէջ: Բայց յիշատակը չի  
կրնար վերացական ըլլալ: Անպայ-  
ման որ, ան իրաւ դէպքի մը, կամ  
ապրուած պահի վերաբարձումը  
կը պատկերէ: Ապացոյց որ, ահա  
անմիջապէս ետքը, ան կը սկսի  
թուել նախապէս այդ պատահածնե-  
րուն շարադրանքը.

«Բու պատկերդ աչքիս մէջ է. քու  
ձայնդ՝ ակամօքիս,  
Կը թրթռան այս գիշեր, երակնե-  
րուս մէջ կարծես  
Քաղցրահոտ շունչդ է լեցուած,  
որ կը զգլխէ, կ'օրոք գիս,  
Մինչ երեսէս ալ կ'անցնին կար-  
ծես մատներդ անտես...»:

Վերացականի միայն պատրան-  
քը տուող այս ստղերը, իրականու-  
թեան մէջ թանձրացեալ, շօշափելի  
իրավիճակ մը կը զարթնեցնեն մեր  
մէջ, ուր սիրած աղջկան պատկերն  
ու ձայնը ոչ միայն կը թրթռան աչք  
ու ակունքի մէջ, այլ եւ մանաւանդ  
կը զգլխէ, երակներուն մէջ: Այս-  
պէ՛ս, չէ՞ք լսեր միթէ՞ ահա անոնց  
հեւքը արեան հոսքին ընդմէջէն, իսկ  
երբ անդիւն, երեսէն ալ կ'անցնին  
մատները անտես՝ չէ՞ք սարսուար  
անոնց թովչանքովը գով: Թէքեանի  
հրաշքը այս է. վերացականի վար-  
չամակով ան կը փոխանցէ մեզի  
շօշափելի, իրականութեան մարմ-  
նական թանձրութիւնն ու զգացո-  
ղութիւնը: Եւ այս՝ բանաստեղծու-  
թեան հուժեղ հիմնատարն իսկ է,  
իմա՛ստը գոյութեան:

Գալով Թէքեանական թախի-  
ծի ընդհանրացած այն տեսութեան,  
պիտի գայն չչփոթենք անվերադարձ  
յոռետեսութեան մը հետ, այլ պիտի  
ընունինք որ, սրա՞ւ կամ անբարեն-  
պատա դաստորոշումով, ճակատագի-  
րը չստեղծեց այն ուրախ ու խաղաղ  
պայծամներն ու մթնոլորտը, ուր  
բնականօրէն կրնար ուռճանալ բա-  
նաստեղծին հոգեկան պայծառ աշ-  
խարհը: Մի մոռնաք որ իր բանաս-  
տեղծական աշխարհը կը ձեւաւոր-  
ուի Համիտեան սարսափի եւ ճնշու-  
մի ահաւոր մթնոլորտին մէջ, իսկ  
պատանեկան եւ երիտասարդկան  
կեանքի իր հոլովոյթէն սկսեալ, իր  
սէրերը, զարմանալի գուգադիպու-  
թեամբ մը կ'ընթանան անկարելի  
ողողութեամբ, եւ անոնց բռնկումնե-  
րը կը մնան անարձագանգ, չհասկց-  
ուած: Իր շրջապատէն այս հասկց-  
ուելը, չըսելու համար անտեսուի-  
լը, կրնար արդարացիօրէն դառնու-  
թեան թանձր զգացողութիւնը սրել  
իր մօտ, ցաւցնել իր զգայուն հոգին  
եւ մղել մեկուսացման, առանձնու-  
թեան: Բանաստեղծին ապրած անձ-  
նական ձախողութիւններէն ամե-  
նաճնշիչն ու ջլատիչը եղած է  
հաղորդակցութեան այս մեծ բացը.

«Ես սիրեցի, բայց ոչ ոք  
Սիրածներու գիտցաւ թէ՛  
Ձիւքը որքան սիրեցի...  
Ո՞վ կարդալ սիրտը գիտէ:  
Ամենէն մեծ հրճուանքիս,  
Ամենէն սուր վիշտերուս  
Ներշնչողները, աւաղ,  
Ձիս չեն ճանցնար այս պահուս»:

Անհասկացողութիւնն ու առանձ-  
նութիւնը մղեցին որ բանաստեղծը  
կանուխէն ապաւինի գաղտնապա-  
հութեան, «հոգին ծածուկ պահա-  
րան» ի վերածելով, իր ապրումներն  
ու յուզումները մղելով առաւելա-  
բար դէպի ներ միայն: Չնոող,  
պրպտող, անվերջ հարցադրող մը՝  
ան, իր ներաշխարհին լոյսն ու  
մութը շատ յաճախ լուռ ցաւով  
պահեց օտար նայուածքներէ, եւ  
չունեցաւ բաժնեկցութեան սիրտա-  
բար բալասանը: Ու չզարդեցաւ այդ  
մութն ու լոյսը անողք իր դատումի  
լուսարձակին տակ պահելէ: Ու տա-  
ռապեցաւ զանոնք անզարդում խո-  
րացնելով եւ պեղելով, վերլուծելով:  
Իսկ իր պահանջը կեանքէն, յաճախ  
նուազագոյնն էր, լոկ «Անուշ հոգի  
մը ըլլար, ես այն հոգոյն սիրահար,  
ան իմ երկինքն ըլլար...»:

Անհասկացողութեան ուրիշ  
պատճառ մը նաեւ՝ Թէքեանի կա-  
տարելապաշտութիւնն էր, երբ ան,  
այնքան բծախնդիր իր բառերուն եւ  
պատկերներուն ընտրութեան մէջ,  
չէր կրնար պահանջկոտ չզառնալ  
նաեւ հոգեկան իր ապրումներուն  
հաղորդակից եւ անոնց համալար  
թրթռացումներ գտնելու փնտտու-  
քին մէջն ալ: Ազնուագոյնին եւ  
գեղեցկագոյնին իր ձգտումն ու մատ-  
չումը սակարկութեան ոչ մէկ չի-  
ջում հանդուրժեցին: «Բարձրա-  
ցիր-բարձրացուր» ի հռչակաւոր իր  
պատգամ-գոլջացումը, ուղղուած նա-  
եւ իր անձին՝ հոյակապ պատկերով  
մը կը յուշէր թէ «քանի վեր ելլես՝  
պիտի մտիս ու դողաս, մնաս մինակ,  
խեղճ տղաս»ը, արդէն կու տար  
մենակութեան անխուսափելի ճա-  
կատագիրը ազնիւ հոգիներուն հա-  
մար: Անշուշտ, իր ըղձանքն էր քանի  
մը «սիրուած հոգի» իր հետ բարձ-  
րացնել, ջերմանալու համար, բայց  
այդ անկարելի բաղձանքին դէմ  
ունէր նաեւ անողք գիտակցու-  
թիւնը այդ կարելիութեան անըջա-  
կանութեան:

Բնախօսական հակում մը չէ  
եղած, բնաւ, սիրերգութեան տրտմա-  
թախճոտ իր այս երանգաւորումը:  
Երբ սէրը գտած է իր փոխադարձ-  
ուած արձագանգն ու անվրդով հու-  
նը, Թէքեան գիտցած է լաւապէս  
արժեւորել գայն ջինջ ու վճիտ  
պայծառութեամբ եւ կենսախինդ  
տրամադրութեամբ.

«Գիտե՛ս, ծաղկի մ'է նման, շքեղ  
եւ շատ հազուադիւր,  
Սէրն որ բուսցուց իմ հողիս մէջ  
քու առուակը շեղած...»

Օհ, գուրգուրանք այդ ծաղկին  
վրայ՝ որ է նոյնքան նիւթ  
Որքան հողի, ու եթէ զայն չորցնէ  
իսկ Աստուած՝

Պահե՛ք իր յուշը մեր մէջ, իբրեւ  
բուրում մ'անասողիտ...»

Մեծ եղած է նաեւ դերը իր  
շրջապատի կարծր նիւթապաշտու-  
թեան, որով գրեթէ անկարելի կը  
դառնար հոգեկան արժէքներու ձե-  
ւաւորումն ու արժեւորումը: Բա-  
նաստեղծը իր վսեմական ապրում-  
ներով վերացած, յաճախ բախած է  
այդ կարծրութեան ու դառնացած:  
Այդ կացութեան անդրադարձը չէ՞  
միթէ, Թէքեանի հեզմախառն դառ-  
նութեամբ մէջ յանդանշական հար-  
ցադրումը, թէ «բանաստեղծութիւնը  
կ'ուտուի...»: Պարզ, պատահական  
նախադասութիւն մը չէ այս, այլ՝  
այնքան գիպուկ պատկերով բնորո-

շումը ժամանակ-միջակայքի նիւ-  
թապաշտ հոգեբանութեան եւ վերա-  
բերմունքին: Այս պայծամներուն  
մէջ, իրաւունք չունի՞ բանաստեղծը  
գուժելու ոչ նախանձելի վախճան  
մը՝ նոյնքան անողք եւ ուսանելի  
նաեւ այս օրերու մեր արժեւորում-  
ներու ուրացումին ի տես.

«Որքերգութիւնն այս անհուն պի-  
տի տեւէ ալ այսպէս,

Ու պիտի զայն չլսէ ու չտեսնէ ոչ  
մէկ անձ,

Եւ իմ մութիս մէջ տակաւ պիտի  
մարիմ, հատնիմ Ես»:

Թէքեանի մարդկային տար-  
րական իղձերը յուզիչ են, այնքան  
համեստ ու բնական՝ իրենց պարզու-  
թեան մէջ իսկ: Ոչ հարստութիւն, ոչ  
փառք եւ ոչ ալ այլ շուսլանք էր  
ակնկալութեան իր առարկան, այլ՝  
լոկ սիրող հոգի մը միայն, զաւակի  
մը բարձրացող հասակը իր դիմաց,  
եւ տուններուն մէջ անթիւ, տուն մը  
համեստ՝ հոգ չէ թէ վարձու՝

«...Օհ, ինչ տուն, ոչ իսկ խորճիթ  
մ'որ ըլլար

Ինձի եկած անցեալէն ու պաշտ-  
պանի իմ վաղս ալ,

Ուր չգողար յիշատակն հոն զգա-  
լով զինք օտար,

Ուր կարե՛նա յոյսն ապրիլ ու եր-  
գել քիչ մ'ու խնդալ...»

Չունեցած գաւկին սէրն ալ  
որպէս այլ յաճախանք հալածած է  
զինք մինչեւ մահ: Մահը յաղթելու,  
գոյատեւման տենչը պիտի հանդի-  
սանար այդ չունեցած գաւկին սէրը,  
տեսակ մը անմահութեան ձգտումին  
իր փարումը պիտի ըլլար ան,  
երջանկութեան կուռան մը՝ որմով  
պիտի ուռճանար հոգին: Բայց որ  
մնաց երազ մը անհաս, ուրիշ շատ  
մը երազներու կողքին:

«Ձաւկի մը շնորհն անգամ, ո՞վ  
Տէր, զլացար.

Ինձի ընդմիշտ, եւ այդ մասունքը  
սիրոյս

Արգիլեցի փակաւնքներու տակ  
անյոյս,

Եւ զիս իմ մէջս սպանցեցի չա-  
րաչար»:

Տառապահար հոգիի մը համա-  
կերպումէն աւելի բողբոքի սրտառուչ  
ձիչ մըն է վերջին այս ստղը, ընդդէմ  
անողք ճակատագրին որ օժտելով  
զինք գեղեցիկի, բարիի եւ արդարի  
ստեղծագործական աստուածատուր  
ձիրք-տեսիլէքներով հանդերձ, զլա-  
ցաւ սկայն, մարդկային ամենա-  
պարզ ու տարրական վայելքներն  
իսկ:

Միրոյ այս բաժինը կարելի չէ  
սահմանափակել բանաստեղծին  
միայն միւս սեռին հանդէպ տածած  
հրաշքով եւ ապրումներով, զգացա-  
կան եւ իմացական ալեւորումով:  
Թէքեանի մօտ սէրը ընդհանրական,  
համամարդկային բնոյթ ալ ունի, որ  
անպայման կ'ընդգրկէ գեղեցիկի ար-  
դարութեան, ներդաշնակութեան,  
վսեմ զգացումներուն եւ գաղափար-  
ներու կողքին, նաեւ մանաւանդ՝ իր  
հայրենիքին ու ժողովուրդին հերո-  
սական անցեալին ու ներկայի ող-  
բերգութեան եւ տառապանքին խոր  
արձագանգները: Պարզ բառերով՝  
Թէքեան եղած է մեծ մարդասէր մը,  
մեծ հայրենասէրի մը կողքին: Իր,  
ազգային ցաւն ու մորմոքները ըն-  
կալելու ընդունակութիւնը համա-  
մարդկային ցաւերուն եւ մորմոքնե-  
րուն հանդէպ իր ունեցած կարեկից  
եւ արդարատենչ կեցուածքէն կը  
բղխի: Այս գուգորդութեան լաւա-  
գոյն նմուշը «Երբ Օրը Գայ վերջա-  
պէս» կոթողական քերթուածն է, ուր  
նախ համամարդկայինի ծաւալումն  
է եւ ապա ազգայինի շարկապումը՝  
սերտօրէն:




### ԼԵԳԵՆԴ ԵՐԻՏԱՍԱՐԴԱԿԱՆ ԶԻԳՁԱԳՆՐՈՒՄ ԱՆԴՐԱՆԻԿ ՍԱՐԵԱՆ

Սփիւռքահայ մեր երախտաշատ արձակագիրներէն է Անդրանիկ Սարեան, որուն ներկայ «Լեգենդ Երիտասարդական Զիգձագներում» 453 մեծադիր էջերէ բաղկացած պատկառելի յուշավէպը հրատարակուած է 2008.ին, Լոս Անճելոս: Կլենտէյլ, ուր ան հաստատուած է 1987.էն ի վեր:

Սարեան իր գիրքը կը ձօնէ գրքի հովանաւոր Դոկ. Հրաչ Եղգարեանին, որ կարելի դարձուցած է անոր լոյս ընծայումը: Ներկայ յուշավէպը՝ նախորդ «Պատմութիւն Զարմահալ Գաւառի» (1981) պատմագրական աշխատութեան կողքին, Սարեանի մեծապէս գնահատուած հինգ վէպերուն՝ «Հայկական Վագրը» (1961), «Մեր Պղնձեայ Գայլը» (2002), «Անլոյս Քառուղիներում» (2002), «Մեր Օրերի Մարգարէն» (2005) շարքին, կը կազմէ Անդրանիկ Սարեանի վեցերորդ ուշադրութեան արժանի վէպը:

Անդրանիկ Սարեան ծնած է Պարսկաստանի Զարմահալ Գաւառի մէջ, 14 Ապրիլ 15, 1914.ին: Իր ուսումը ստացած է Հնդկաստանի Կալկաթա քաղաքի Հայոց Մարդասիրական Ճեմարանի մէջ: 1935 .ին վերադառնալով իր ծննդավայրը Պարսկաստան, երկար տարիներ աշխատած է անգլիական Նաւթարդիւնաբերական ընկերութեան մէջ, որուն «Կերոն» անգլիատառ շաբաթաթերթի խմբագիրը եղած է մինչեւ 1968 թիւը:

Անդրանիկ Սարեանի ներկայ «Լեգենդ Երիտասարդական Զիգձագներում» 453 մեծադիր էջերու մէջ տեղ գտած են իր երիտասարդական տարիներու զգացական, համայնքային, գրական. ու Նաւթարդիւնաբերական ընկերութեան մէջ ամբողջ կեանք մը ապրած աշխատաւոր կարօտակէջ հայ տղամարդու փորձառական ապրումները, որոնք կը յայտնաբերուին աշխատանքի բերումով իր գտնուած Նաւթարդիւնաբերա-



կան այլազան շրջաններու մէջ, ինչպէս Ապատանը, Մասէր-Սուլէյմանը, Ահուազը, ուր մեծ թիւով հայ աշխատաւորներ ներգրաւուած են: Գրաւիչ է Սարեանի ջերմ, պատկերաւոր, վերլուծական նաեւ տեղական բառերով համեմուտած ասացուածքներով, վաւերական գրողներու կողմէ կատարուած ընդհանրացումներով, նաեւ պատգամներով, կամ այլ, մասալներով Սարեան մէջ ընդ մէջ աշխատանքային շրջաններուն անուններու ստուգաբանութիւնը կը կատարէ: Մինչ իր յիշողութեան պատմութիւն վրայ կը տողանցեն իր սրտին հարազատ այլապէս հեռաւոր ձեւերկան, ամենօրեայ վառօդը Գրիգորը, Արամը, Արստակը, Արտակը եւ ուրիշներ՝ շատ ու համակրելի հայտնիներ, հայ երիտասարդներ, որոնք հացի ճամբուն գլտորուած են կիզիչ, քարիւղահամ եւ ամալի հեռաւոր անապատներ:

Անդրանիկ Սարեանի վէպերը արժանացած են «Հայկաշէն Ուզունեան», Ֆրանսական Գրողներու Ընկերակցութեան առընթեր «Էլիզ Գաւուքեան..Արագեան», «Ներսէս Շնորհալի Գրական ֆոնտի», «Բաբգէն եւ Անահիտ Խանճեան» գրական մրցանակներու:

### ԼՈՍ ԱՆՃԵԼՈՍԻ ՀԱՅ ԲՈՅՐԵՐՈՒ ՎԱՐժԱՐԱՆԻ ՍՈՒՐԲ ԾՆՆԴԵԱՆ ԶՈՅԳ ՀԱՆԴԵՍՆԵՐԸ

Շարունակուած էջ 13-էն

Կ'ընդմիջուէին օրուան պատշաճ ոտանաւորներով եւ անհատական նուագներով՝ ներկայացուած աշակերտներու կողմէ:

Երկրորդ մասով բեմ բարձրացան աւելի բարձր դասարանի աշակերտներ երգելով՝ «Խորհուրդ Մեծ եւ Սքանչելի» շարականը, նախորդներու անմեղունակ եւ եռանդուն մեկնաբանութեան տեղի տալով աւելի գիտակից եւ ապրումով մեկնաբանութեան: Աշխոյժ Կաղանդի երգերուն եւ Մննդեան շարականներուն, որոնք յաճախ երեք լեզուներով երգուեցան, երբեմն համեմուտեցան մեներգներով, գործածելով զանազան երաժշտական ձայնային գործիքներ, խմբային արտասանութիւններով, ասմունքներով, իսկ քանի մը երգ ալ մեկնաբանեցին երկու ձայնով, իսկ երգերու ներկայացումներն ու բեմավարութիւնը վստահուած էր աշակերտներուն հանդիսատեսին պարզեւելով հիանալի ապրումի պահեր:

Ամանորի սեմին գեղեցիկ ծաղկեփունջ մըն էր նուիրուած ծնողներուն, որոնց հոգին լեցուեցաւ հպարտութեամբ եւ հրճուանքով ի տես իրենց զաւակներուն, որոնք մօտաւորապէս մէկուկէս ժամ մեծ հաճոյքով եւ պատասխանատուութեամբ ներկայացուցին գեղեցիկ երգերու յոյլ մը, հանդէսը վարեցին նուագեցին եւ արտասանեցին: Մէկ խօսքով սքանչելի եւ համադրուած աշխատանքի արդիւնք էր, Տնօրէնութեան, ուսուցչական կազմի եւ աշակերտութեան համագործակցութեամբ, արդարացնելով Հայ Քոյրերու Վարժարանի Քրիստոնէական դաստիարակութեան սկզբունքը, աշակերտները հայ խօսքի, երգի եւ շարականի երգեցողութեան մթնոլորտի մէջ պահելով ի գոհունակութիւն դաստիարակին եւ ծնողքին:

Նպատակը արդարացած է, շնորհակալութիւն բոլոր նուիրեալներուն եւ ի մասնաւորի երաժշտութեան ուսուցչուհի Տիկ. Վարդուհի Պարտասարեանի:

### ՊԱՐԱՔ ՕՊԱՍԱՆ ՇՈՒՏՈՎ ՊԻՏԻ ՀԱՆԳՐՈՒԱՆԵ ԻՐ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԵՐԴՈՒՄԸ

Շարունակուած էջ 1-էն

Երբ մտաւ իր տի գործէ Սպիտակ Տուն՝ Օպամայի աշխատակազմը, որ արդէն իսկ Ծերակուտական ժողովի քննարկման գործընթացի մէջ կը գտնուի վաւերացուելու համար՝ պատրաստ է արդէն ձեռնարկելու աշխատանքի:

Յետադարձ ակնարկ մը նետելով իր կազմած դահլիճին վրայ, պիտի նկատեմք ուշագրաւ իրողութիւններ, որոնք տակաւ կը բարձրացնեն Օպամայի ժողովրդականութիւնը:

Հակառակ գոյութիւն ունեցող կարգ մը մեղադրանքներու՝ թէ՛ դահլիճը կը բաղկանայ փառապաշտութեան քաղաքացիներէ, թէ՛ ի՞նչ քանի ծառայեցին փոփոխութեան համար կատարուած փութարկութիւնները, եթէ դահլիճէն ներս Հիլըրիի մը կողմէն պիտի նստէին Ճօ Պայտընը, հանրապետական Թոմ Վիսալը եւ այլն - Օպամա իր ընտրութիւնները կատարեց համաձայն երկրին իրապէս անհրաժեշտ նկատուող կարող դեմքերու մէջէն, առանց հատուածական շահերու տուրբ վնասելու, առանց խտրականութեան:

Այսպէս, նախարարական պաշտօններ ունեցան Նոյեմբերի Մրցանակի արժանացած Սթեֆըն Չու: CNN-ի բժշկական սիւնակագիր 39 տարեկան Սաննայ Կուպթա, որ դարձաւ երկրի գլխաւոր բժիշկը: Իսկ նախկին հրամանատար Ճէյմս Չոն, որ սերտօրէն գործակցած էր նախագահական թեկնածու Չոն Մ'Բէյքի հետ, եղաւ նախագահի դիւանագիտական խորհրդակցի: Աշխատաւորական համադաշնակցութեան ֆարտուղարու հի Հիլտա Սոլիս՝ Աշխատանքի Նախարարու հի եւ ուրիշներ: Պարաօպամա գործակցութեան ձեռնարկները լոր անոնց, որոնք նախամեծար կը համարէին երկիրը փրկելու իր տնտեսական եւ ֆառաքական ճգնաժամներէն: Ան կոչ ուղղեց թոլորիմ, թոլոր անոնց, որոնք օգտակար թելադրութիւններ ունէին երկիրը դուրս բերելու համար իր տագնապներէն, պատրաստ էր լսել գանձ: Ան բարձրաձայն յայտարարեց, թէ գինու ու ժով կարելի չէր լուծել աշխարհի տագնապները: Լուծման առաջնորդող նամբան կ'անցնէր քանակութիւններու գծով: Այս բարձր գաղափարախօսութեան թելադրութեամբ, որ մտր նշանակեալ Պետական Քարտուղարու հի Հիլըրի Քլիմբըն պիտի

բարձրաձայն կոչ ուղղէր աշխարհին, թէ ԱՄՆ-ը առանձին ի վիճակի չէ լուծելու աշխարհի խնդիրները, եւ ան պատրաստ է քանակութեան նստելու Իրանի հետ:

Ուշագրաւ երեւոյթ դարձաւ նաեւ Կուսակցական միջադէպը՝ Օպամայի վերադարձը փակելու խոստումին վերահաստատումը: Իրաւամբ, Օպամա՝ նախագահական երդումին յաջորդող օրն իսկ, Յունուար 21-ին, պիտի ստորագրէ համաձայնութեամբ փակելու հրամանագիրը, որուն անշուշտ պիտի գործէր քանակութեան չարքարանքի ենթարկելու ԱՄՆ-ի գաղտնի սպասարկութիւններուն տրուած թոյլտւութեան վերացումը: Այս կեցումով մէջ կար յստակ միտք, թէ՛ ԱՄՆ պէտք էր վերականգնէր հայրու որդի ապիկար Պուշերու անբարտաւան, անարգական, այլ՝ նարսիսեան ֆառաքականութիւնը, որ շատ սուղ արժեք ԱՄՆ-ի ներքին եւ համաշխարհային վարկին: ԱՄՆ պէտք էր վերագտնէր իր պատմական համբաւը, որ շուտով պիտի հանգրուանէր իր դաւանած անխտրական փառապաշտութեան:

Այնքան թէ «փոփոխութեան» հաստատարի Պարաօպամայի քարեմտրոգական առաջնութիւնը: Ժողովուրդը ակամատես վկայ է անոր: Մեր այս քննադատ մը իր պայցոյցը կը գտնէ Opinion Public-ի լոյս ընծայած ուսումնասիրութեան մէջ, ուր դիտել կը տրուի, թէ ընտրեալ Նախագահ Պարաօպամա կը վայելէ ամերիկացիներու 82 տոկոսի վստահութիւնը: Իսկ ինչ կը վերաբերի Օպամայի փոխանցման շրջանին տարած աշխատանքներուն, անոնց իր համամտութիւնը կը յայտնէ ժողովուրդին երեք չորրորդը, ըստ «Ուսումնասիրութեան Կեդրոն»-ին: Տարակոյս չկայ, ինչպէս իր ընտրական սուր պայքարի օրերուն կողմնորոշուեցանք իր կողմին, ներկայիս մեծ է մեր հրճուամբ իր տալիք Սահմանադրական երդումի նախօրեակին, այն հաստատ համոզումով, որ Պարաօպամա է եւ պիտի մնայ այն ընտրեալ Նախագահը, որ հաստատարի իր առողջ գաղափարախօսութեան եւ քաղաքացիական խոստումներուն՝ լուսաւոր մտր հորիզոններ պիտի բանայան իրաւունք, եւ իրաւագրկուած ժողովուրդներու կեանքին մէջ: Միւս, կը շնորհաւորեմ գին մեր տուած Սահմանադրական երդումին բարեբաստիկ առիթով ու կը մաղթեմք ֆառաքողութիւն, արեւշատութիւն եւ արդիւնաշատ ապագայ:

**ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ**

Սիրելի Տօքթ. Արշակ Գազանճեան, խմբագիր «Մասիս» Շաբաթաթերթին Հաճոյքով կարդացինք «Մասիս»-ի Նոր Տարուայ խմբագրականը: Բարձրօրէն գնահատեցինք զմայլելի լեզուով, առինքնող ոճով, իմաստալից բովանդակութեամբ գրուած առաջնորդականը: Անցնող տարիներու վրայ երկարող եւ տակաւ դառնօրէն համեցող սփիւռքահայ թէ՛ հայրենի թերացումներու, անլոյժ մնացած ժխտական երեւոյթներուն փափկանկատ թողումները, մեզ թէ՛ մարդկութիւնը յուզող մարտահրաւէրներու յիշատակումները եւ... հակառակ այդ ժխտական երեւոյթներուն Նոր Տարուայ բերած Յոյսի, ինքնազօրութեան, սիրոյ, համերաշխութեան, միասնականութեան եզրափակիչ բարեմադրութիւնները մեզ յուզեցին...

Առ այդ ներփակ կը գտնէք մեր երկուքին գնահատական նուիրատուութիւնը՝ \$200 «Մասիս»-ի ֆոնտին:

Բարեկամական ջերմ զգացումներով եւ Ձեզի անձնապէս առողջութիւն եւ արեւշատութիւն մաղթելով մնամք՝

Տօքթ. Գէորգ Քէշիշեան  
Նուպար Միսի-Գէորգեան



# ՎԱՐԱՆ ԹԵՔԵԱՆԻ ԲԱՆԱՍՏԵՂԾԱԿԱՆ ԱՇԽԱՐՀ

Շարունակում էք 15-էն

«Երբ Օրը գայ վերջապէս, եւ ըլլայ մարդը մարդուն՝  
Վայելքի մէջ, ի հարկին զոկանքի ալ հաւասար,  
Ուղղէ միայն բնութեան գոհութիւն կամ դառնութիւն,  
Նմանին ոչ, յագուրդին անօթութեանն իր համար...»

Երբ ալ շղթան փոխանցման ըլլայ ու ոչ կաշկանդման, Ուժին հետ խելքն ու խելքին հետ վազէ սէրը նաեւ՝  
Բոլոր ազգերն իրարու զօրող կապին այդ վրան  
Ու կազմէ մէկ ընտանիք մէկ աշխարհին այս վերեւ...»

Երբ հիմա մօտ, մօտեցած այդ Արշալոյսը կը ծագի՝  
Գիտեմ ես ցեղ մը ցրուած ամբողջ երեսը երկրի,  
Որուն բոլոր դամբաններն ու օրրանները բոլոր  
Պիտի յանկարծ արթնման, պիտի գոչեն հրճուանքով,  
Երդէ երդիք, փոսէ փոս, հայրը որդւոյն, որդին հօր,  
Թէ ալ կրնայ՝ մին ածիլ եւ միւսն հանգչիլ ապահով...»:

Իր հայերգութեան բաժինը սիրերգութեան չափ այլազան է, ուժեղ եւ գեղակերտ, եւ մանաւանդ այնքան գուսպ ու ներհուն՝ որ արմատապէս կը զանազանուի իր շրջանի հայրենասիրական պոռթկումներու առատ շեփորումներէն: Խոր պարունակներու եւ մտորումներու վրայ խարսխուած՝ անոնք, չափ ու կշիռի, զգացումի եւ մտածումի հաւասարակշռուած՝ մեքենայի մեքենայի պէտքերով, կ'առաջնորդեն մեզ իրաւ ապրումներու մտածողութեան ձեւաւորումին: Հայրենի անցեալն ու ներկան իրենց հերոսական կամ ողբերգական դէպքերով ու դէմքերով, սեւեռուած են իր մօտ, ինքնուրոյն ներթափանցողութեամբ եւ խորհուրդով, իրատես մտեցումով: Դիւցազներգութիւնն ու ողբերգութիւնը, կողք կողքի, առանց բեմական վերամբարձութեան, սրուած են իրենց պարզագոյն հանդերձանքով, պարզութեամբ մը, որուն խորհուրդէն սակայն կը ծագի թելադրականութիւնն ու վեհութիւնը: Այդպիսին է օրինակ իր նշանաւոր քերթուածը գերեզմարուած Հայաստանին ձօնուած եւ գրուած 1901ին, ուր, «դրօշակ», «ուռենի», «վրիժառու դանակ», եւ «գերութեան շղթայ» չորս տրիպական բառապատկերներու գաղափարագիրներով, այնքան ամբողջական ըմբռնումով կը ներկայացուին մեզի մեր երկիր-ժողովուրդին անցեալն ու ներկան, փառքն ու փլուզումը, ողբերգութիւնն ու վրիպած ընդվզումը, գերութիւնն ու տառապանքը, եւ յուսախաբութիւնն ու յոյսով ջահաւորուելը: Ամէն տունի սկզբնաւորութեան, հակառակ պատկերուած իրավիճակի բնույթին «սիրեցինք քեզ»ը, յանկերգելով, Թէքեան կը ստեղծէ լարուածութեան սպասուած տարողութիւնն ու տեսողականի բաբախուն շօշափելիութիւնը: Վերջին տունը սրբաբարութեան (սիրեցինք) կը հասնի, անցեալի «սիրեցինք»ը ներկայի «կը սիրենք քեզ»ի ուժականութեան վերածելով:  
«Վր սիրենք քեզ արդ, գերութեան Շղթայ»,  
Որ ըմբոստացման կը մղես ըզմեզ...

Մեր միտքուն մէջ, մեր վզին շուրջն ես,  
Եւ ամէն շարժում գոր կ'ընենք հիմա՝  
Մեզ կը գալարէ ցաւերով անգութ...  
Բայց պիտի սիրենք հետքն ալ վերքերուդ,  
Այն օրն ուր ըլլաս մանեակ մը ծաղկայ...  
Կը սիրենք քեզ արդ, հայրենիք, Շղթայ...»:

Այս նոյն երակէն բղխած է, բայց նաեւ այլ երանգաւորումներով ու կառուցով ամբողջացած՝ երկար շարքը Թէքեանական ամրակուռ հայերգութեան. «Լուսաւորչի Կանթեղ»ով հաւատաւորուած, «Հայերէն Լեզուի Մրգաստան»ով մեղրացած, «Եկեղեցին Հայկական»ով գրահանդերձուած, «Պիտի Ըսենք Աստծոյ»ին բողբոջի լաւաներով շիկացած, «Յարութեան Վերանորոգ Շունչ»ով կենդանացած, եւ «Պիտի Ինչաս»ի թուրքին ճակտին արձակուած անյողողդ վճիռով եզրակացուած այս քերթուածները, իրենց բիւրեղացած ձեւով ու կառուցով անմահութեան ուղեգիրը անպայման որ նուաճած են: Որովհետեւ անոնք մեր արմէնաւանդ ցեղին տոկուն եւ ներհուն արմատներէն բղխած հրացայտումներ են:

Կ'ըսուի թէ բանաստեղծութիւնն եւ քաղաքական մտածողութիւնն չհամատեղուող ըմբռնումներ են, մէկը միւս ժխտող: Բայց Թէքեանի մօտ, անոնք հրաշալի ձեւով ստեղծած են համակեցութիւն մը, շնորհիւ բանաստեղծին տեսլականին եւ հեռատես հոտառութեան, անցած են զգացական եւ իմացական անոր քամոցներէն եւ բանաստեղծութեան եկած, չափ ու կշիռի տիրապետուած զգումով: Արդիւնք՝ գեղագիտութեան հպատակած քաղաքական տեսանդուութիւն: Լաւագոյն օրինակը սաքերթուածն է որ գրուած է 1933ին եւ ձօնուած՝ ներկայ, այսինքն այդ օրերու խորհրդային Հայաստանին: «Ներք՝ որ քէն ըրի քեզի քիչ մը ատեն  
- Մինչեւ երէկ- ու դեռ տաք չեմ բոլորովին...  
Բայց կը խլէ շունչդ ինձմէ կայծեր արդէն  
Չփայլած հին ու փայլելիք բոցին հաշուին...»

Սրտէս առաջ միտքս յարեցաւ, փարեցաւ քեզ...  
Սիրտը ունի յիշողութիւն մ'աւելի խոր  
Եւ չէր կրնար ան չիշել Սուրբն ողջակէզ  
Խարոյկին վրայ, ուրկէ փիւնիկ ծնար դուն մոր...  
Ու գոցաւ միտքս քեզմով, սփոփուեցաւ,  
Ուրախացաւ մինչեւ անգամ, քեզի դիմեց  
Ու կը դիմ հիմա՝ ինչպէս գանձի մը մեծ...  
Տարբեր ես դուն մեր երազէն. աւելի լաւ...  
Աւելի լաւ կ'ըսեմ այո, անգիղջ, անգութ,  
Ձի դատակնիքն է «չեղածին» փաստն «ըլլալուդ»...  
Հնչեակի մը ժլատ այս կաղապարին մէջ Թէքեան յաջողած է բանաստեղծական պայծառատեսութեամբ տալ իրապաշտ եւ իրատես վերլուծումն ու վճիռը, 1920 թուականէն մինչեւ այսօր խորհրդային

Հայաստանի առնչութեամբ տակաւին մեզ երկփեղկող համագային տարակարծութեան: Որքան ժամանակի, նիւթականի եւ արեան կորուստ եւ անմիաբանութեան ահաւոր տկարութիւն ինչպէս պիտի ըլլայինք, եթէ ժամանակին ականջալուր ըլլայինք բանաստեղծի յորդորին: Այս մէկը՝ շեշտելու համար տեսանող բանաստեղծին մարգարէական կարողութիւնն ու ուժականութիւնը: Եւ ասիկա կիրարկելի՝ նաեւ համամարդկային խմորումներու այլ առնչութեամբ բանաստեղծը մարգարէացած է քաներորդ դարը դրդացնող մեծաշառաչ ալեկոծումներուն դէմ յանդիման, զգոնութեան իր միաստութեան յորդորը տալով:

«Թող սասանին ու փշրին բարձր բերդերն անառիկ  
Եւ իյնան վրա պատմէշներն գրահապատ ետութեանց.  
Ամէն մարդու հաւասար թող բաժնուի ամէն գանձ.  
Թող պարտեզները բացուին եւ թող խուժեն հոն մարդիկ,  
Բայց չկուտրեն ոչ մէկ ծառ, չզգան ոչ մէկ ծաղիկ...»:

Վերջին այս տողը ինքնին փիլիսոփայական մեծահաստորի մը կշիռ ունի, եւ որուն անտեսումը, մարդկութեան արժեք տասնեակ միլիոնաւոր զոհեր եւ ովկիան մը տառապանք, յառաջացնելով նաեւ մարդկային մեծագոյն երազին ինքնափլուզումը:

Երբք տարագումներու սեղմ սահմանին մէջ փորձեցինք տալ Թէքեան սիրերգակին, մարդասէրին եւ հայրենասէրին բնութագրումները: Այս տարագումներէն դուրս կը մնան սակայն Թէքեանի որոշ տարագում չունեցող սքանչելի բազմաթիւ բանաստեղծութիւնները, որոնցմէ պէտք է յիշել գոնէ «Կ'անձրեւէ Տղաս...»ը, «Կուռի երթ»ը, «Հաշտարդար»ը, «Մէկ Հատիկ»ը, «Հպարտութիւն»ը, եւ այլ գոհարներ, որոնք մեր բեմերուն զարդը դարձան եւ իրենց արուեստով, կառուցով եւ պարզութեամբ պատուոյ տեղը գրաւեցին մեր քերթողութեան պանթէոնին: Անոնցմով մենք յայտնութիւնը կ'ընենք Թէքեան ամբողջական մարդուն՝ մտածումներու իր յղուած ու կուռ սլացքով եւ գերզգայուն ներաշխարհին ամենամտերիմ խորշերու ներթափանցումով:

Թէքեանի արուեստը ինքնուրոյն է ու ինքնբառիկ ամբողջութեամբ: Գրական տեսաբանները ի գուր կը ջանան գիրք կաղապարել քերթողական դարձող մը կամ շարժումի մը մէջ: Ան ոչ խորհրդապաշտ է, ոչ ալ պառնասական: Պարզապէս, Թէքեանական է, գտարիւն եւ միշտ հաւատարիմ՝ ինքզինքին: Ան ստեղծած է իր անձնական

բիւրեղեայ լեզուն, վճիռ ու ջերմագեղ ոճն ու դարձուածքները, որոնք միեւնոյն ժամանակ պարզ են, յստակ ու յղուած, պիրկ ու սեղմ՝ պայծառութեամբ մը որոնց չի պակսիր յուզումին ջերմութիւնը եւ մտածումին պերճանքը: Զգացական եւ մտածողական երկու այս տարրերը առանցը կը կազմեն Թէքեանի բանաստեղծական կառուցին: Անոնք, փոխադարձ ներազդեցողութեամբ եւ պատճառականութեամբ գիրար կ'ամբողջացնեն, գիրար կը լուսաբանեն: Թէքեանէն կարելի չէ գտնել նոյնիսկ մէկ բանաստեղծութիւն ուր զգացում յուզականութիւնը հոսի ամանազեղ ինքնապատակութեամբ: Անկից անպայման կը պտղի գաղափար մտածումը, արդարացնելով կամ եզրակացնելով յուզումին խուլքը եւ անոր թելադրական ուժականութիւնը: Իր պատկերները, յաճախ իր կողմէ ստեղծագործուած նոր բառեր են, ինքնին պատկերաւոր, ինչպէս. հոյածեւ, սրբողորկ, ծարաւահիւս, սրտաբոյր, երանաշող, ցամառակոծ, գահակործան, գալարատանջ՝ որոնք բարդ բառեր չեն լուր, այլ, նախադասութեան մէջ տեղին գործածուած, պահի մը, զգացումի կամ մտածումի պայթուցիկ ճաճանչաւորումն են իրենց ներքին ուժականութեամբ եւ ինչպէս թեմբեմը յատկանշուող: Բառեր՝ որոնք այսօր կը թուին այնքան բնական եւ ընտանի՝ բայց որոնք չկային երէկ, Թէքեանի ստեղծագործումէն առաջ:

Ըսինք Թէքեանն ոչ ոքի հետեւեցաւ, բայց ստեղծեց այնպիսի պերճագեղ լեզու մը մեղրահամ, ոճ մը ճշգրիտ, պատկերալից եւ դարձուածքներ գեղահիւս՝ որոնց կախարդական արահետներէն քալեցին բազմաթիւ տղաք, նոյնիսկ օժտուած եւ տաղանդաւոր, եւ բայց որոնք բնաւ չկրցան ձերբազատուիլ այդ հուժկու ազդեցութեանէն, գտնելու համար իրենք ինքնուրոյն ուղին:

Վերջացնել առաջ, չեմ կրնար դիմադրել մեր ամենախիստ քննադատին, Յակոբ Օշականին սա հոյակապ սահմանումն ալ մէջբերելէ, գրուած Թէքեանի մասին.

«Մեր Բանաստեղծութիւնը չունի երկրորդ անուն մը, որուն քերթուածները ներկայացնեն հաստատ եւ խստապահանջ ճարտարապետութիւն մը, կառուցութեան զանազ առ զանակ, տեսողութեան շատ ընդարձակ պարունակներէ, բայց ամբողջին մէջ հաւատարիմ ինքն իրեն: Վասն Թէքեանի մէկն է մեր նոր քնարերգութեան ամենէն խոր բանաստեղծներէն, եթէ ոչ ամենէն խորը: Վասն զի առաջին անգամ ինք մտցուց խորութեան զգայարանքը, տիմանսիծնը անոր մէջ: ...Վարուժանով կը հպարտանանք, Դուրեանով կը տառապալինք, Մեծարեանով կ'անուշանաք եւ Թէքեանով՝ կը զգաստանանք»:

## ԱՐԵՒՍՏԵԱՆ ԹԵՄԻ Ս. ԾՆՆԴԵԱՆ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹԻՒՆԸ

Շարունակում էք 13-էն

Նաճարեանի, Լոս Անճելըս Գաւառի Վերակացու՝ Տիար Մայքըլ Անթոնովիչի, Լոս Անճելըսի Քաղաքային Խորհուրդի Անդամներ՝ Տէնիս Զայնի, Ուէնտի Գրուրլի եւ Ֆրէնք Գուրնթերոյի եւ Կլէնտէյլ Քաղաքի Խորհուրդի Անդամ՝ Պապ Եռսէֆեանի:  
Լոս Անճելըսի Քաղաքային Խորհուրդի Անդամներ Տէնիս Զայնի եւ Ուէնտի Գրուրլի՝ Խորհուրդի կողմէ յատուկ շնորհաւորագիր մը յանձնեցին Սրբազան Հօր եւ շնորհաւորեցին իր Նոր Տարին եւ

Սուրբ Ծնունդը:  
Սրբազան Հօր կողմէ յատկապէս տպագրութեան արժանացած գիրքեր եւ մէկական նշխար բաժնուեցան բոլոր հիւրերուն: Հիւրասիրութեան պատրաստութեան աշխատանքները կատարած էր Առաջնորդարանի Տիկնանց Օժանդակ Մարմինը՝ Ատենապետութեամբ Տիկն Սէնտի Նորեանի: Ընդունելութեան ընթացքին Վարդան Յարութիւնեան նուագախումբ եւ Նայիրի Պարախուժմը՝ դեկավարութեամբ Լուիզա եւ Ժաննա Խաչատրեաններու, խանդավառեցին ներկաները:



«10 ՏԱՐՈՒԱՅ ՔՈՉԱՐԵԱՆԻ «ԶԱՐԳԱՑՐԱԾ» ՏՆՏԵՍՈՒԹԻՒՆԸ 2 ԱՄՍՈՒՄ ՔԱՆԴՈՒԵՑ»

Շարունակում է 5-էն

Որպէսզի ասածս աւելի պարզ լինի, նշեմ, որ միջազգային ճգնաժամի արդիւնքում ամբողջ Ֆրանսիայի ՀՆԱ-ն տարուակ կտրուածքով ընդամենը մէկ տոկոսով է պակասել: Աւելին, արեւմուտքում ինֆլացիան եղել է ամենացածրը՝ 1.5 տոկոս 2008 թուականին: Հայաստանում ինֆլացիան 1997 թուականից յետոյ 2008-ին եղել է ամենաբարձրը: Այդքան բարձր եղել էր մէկ էլ Քոչարեանի վարչապետութեան օրօք: Այս առկայ իրավիճակի մէջ 98 տոկոսը յիմար, սխալ քաղաքականութիւնն է՝ սկսած դրամի արժեւորումից, սխալ հարկային քաղաքականութիւնից, պրոգրեսիւ հարկադրման սկզբունքների բացակայութիւնից, ահա այս բոլորը դուրս են գալիս ջրի երես, երկիրն այլևս չի դիմանում: Այսինքն, բաւական էր դրսի աշխարհը մի փոքր վատանար, եւ մեր տնտեսութիւնն արդէն պայթում է: Եւ վերջապէս արդէն ակնյայտ է դառնում, որ Քոչարեանի ղեկավարած 10 տարում ոչ մի լաւ բան չի եղել, եղել է այն, որ եթէ 1996-97 թուականներին 0 դոլար էինք ստանում դրսից, նրա օրօք 2-25 մլրդ տոլար տրանսֆերտ էր գալիս: Ամբողջ այդ տրանսֆերտների վրայ էլ կառուցուել է երկրի տնտեսութիւնը: Մարդիկ փող էին ստանում դրսից, իրենք էլ մենաշնորհներ էին ստեղծել ներմուծման գծով, ու մարդիկ իրենց ստացած փողով գնում էին ապրանքներն ու ծառայութիւններն իրենց մենաշնորհներից՝ փողը փոխանցելով իրենց ձեռք: Սա է եղել վերջին նշույնը Հայաստանի «տնտեսութիւն» ասածը: Ուրիշ ոչինչ չկայ:

- Պարոն Բագրատեան, կարծես կատարուում են ձեր տարեկան քաղաքականութիւնը չի քաղում:

- Այո երեքից, չորս անգամ, ինչպէս ես զգուշացնում էի, իջել են պղնձի եւ մոլիբդենի գները, հարց է ծագում՝ ճգնաժամային է իրավիճակը: Այո, իհարկէ, ճգնաժամային է. ով էլ լինի՝ ճիշդը կը տուժի: Բայց ճիշդում գինը երկու անգամ բարձր է, քան 93-94 թուականին համաշխարհային գները: Այն ժամանակ այդ ճիւղերը նորմալ աշխատում էին: Հիմա ինչպէս չի ինչնք Քաջարանի պղնձամոլիբդենային կոմբինատի սխալ մասնաւորեցումը, կամ ինչպէս չի ինչնք դրա հետեւում կանգնածին, ինչպէս չի ինչնք Քոչարեանի ղեկավարը: Ճիշդ նկատեցիք, ես ինչ կանխատեսել էի՝ դեռ մի քանի ամիս առաջ եւ ինչի համար ինձ անգամ կառավարութիւնը մեղադրեց, այսօր կատարուում է. մենք տեսնում ենք շինարարութեան ճգնաժամ, լեռնամետալուրգիայի ճգնաժամ, տրանսֆերտների նուազում, տնտեսական անկում, եւ իմ կանխատեսումներից միայն մէկը չի կատարուել՝ արժեթղթերի շուկայում դեռ պայթիւն չի եղել:

Այսօրուայ ճգնաժամը պատասխանն է այն խոր անգործութեան, որ մենք տեսել ենք Քոչարեանի 10-ամեայ կառավարման ժամանակահատուածում, նաեւ պատասխանն է միջազգային ֆինանսական կառուցների անատամ տնտեսական քաղաքականութեան, երբ ամէն ինչի հետ համաձայնում էին՝ վախենալով, որ յանկարծ վատ բան չգրեն իրենց մասին:

- Տարեկան ճգնաժամային իրավիճակի տրամաբանութեան, 33 հարկային օրէնսդրութիւնը խստացուեց, ինչպէ՞ս եք գնահատում այդ հանգամանքը:

- Դա էլ վկայում է պրոֆեսիոնալ անգործազուրկութեան մասին, ճգնաժամի ժամանակ հարկ չեն աւելացնում: Հայ Ազգային Կոնգրեսն առաջարկում էր իջեցնել հարկերը. որոշ դէպքերում պրոգրեսիւ հարկ մտցնել, խստացնել մեծահարուստների նկատմամբ հարկադրումը: Օրինակ՝ մենք առաջարկեցինք շտապ մտցնել կապիտալի արտահանման հարկ: Երկրից անցեալ տարի դուրս է բերուել աւելի քան մէկ միլիարդ դոլար կապիտալ. այսինքն, հայերը փողը հանում են, կապիտալը դուրսն են ստեղծում: Արդէն կապիտալի արտահանումը կ'անցնի ներմուծումից, տրանսֆերտներից:

- Պարոն Բագրատեան, չե՞ն հասկանում, որ չեն անում, թե՞ չեն ցանկանում:

- Կարծում եմ՝ երկուսն էլ. եւ չեն հասկանում, եւ իրենց ձեռք չի տալիս, օրինակ, այսօր պահում են դոլարի կուրսը՝ անտեղի վատնելով երկրի պահուստները. ես գիտեմ, որ դա արևում է, որովհետեւ Սերժ Սարգսեանը խոստացել է 3 մլրդ դոլարի պիւտձէ եւ վերջ. իրենց այդպիսի կուրս է պէտք, եւ այդ կուրսը իրենց տեսակէտից, կայունութեան պատրանք է ստեղծում: Կարելի է կարծել՝ ՌԴ-ում, որտեղ անցեալ տարի 13 տոկոս արժեզրկում է նկատուել կամ միւս երկրներում, որտեղ մեծ ինֆլացիայի է դիտուել, կացութիւնը պակաս է եղել: Իրենց տեսակն այնպիսին է, որ իրենք լաւ բան չեն կարող անել. ամբողջ երկիրը հաշտարկած է մի քանի հոգու վրայ, որ վերահսկելի լինի ամբողջ տնտեսութիւնը:

- Լաւ, մեր հարկատուներին, սպառողներին, ժողովրդին ի՞նչ է սպասուում առաջիկայ ամիսներին:

- Առաջիկայում մենք կը տեսնենք դրամի կտրուկ արժեզրկում, թէեւ կարող են փող հայթայթել, փորձել բոլոր ռեզերվները, պահուստները վաճառել՝ կուրսը պահել, բայց այդ դէպքում տնտեսութիւնը լրիւ կը մեռնի, ինչպէս հիմա է մեռնում: Այսօր կանգնած է լեռնամետալուրգիան, ոսկերչութիւնը, աղամանագործութիւնը, անընդհատ կրճատում է եւ չի անում կոնեակի արտադրութիւնը: Սխալ կուրսի քաղաքականութեամբ բոլորովին անիմաստ է դարձել բարձր տեխնոլոգիական արտադրութիւնը. որպէս օրինակ՝ փակուեց «Լայկոսը»: Այս ամէնը այն պատճառով, որ ուզում են 305-310 դրամ տեսնել դոլարի կուրսը, դրա համար մենք գոհաբերում ենք ամէն ինչ, իսկ դա պէտք է ներմուծողներին. միայն նրանք են շահում դրանից: Ընդ որում, կուրսը պահելով՝ ինֆլացիան էլ չեն կարողանում գապել: 2008 թուականը փակուել է 9.5 տոկոս սղածով:

- Իսկ ի՞նչ պետք է անի ԿԲ-ն կամ Կառավարութիւնը՝ Ձեր կարծիքով:

- ԿԲ-ն պէտք է հասկանայ, որ բացի դրամի կուրս պահելուց ունի նաեւ այլ գործիքներ: Իսկ կառավարութիւնը պէտք է ծաւալի եւ իրականացնի որոշակի ծրագրեր, փոխի հարկային քաղաքականութիւնը՝ ընդհանուր առմամբ թեթեւացման ուղղութեամբ, յատկապէս մանր ու միջին բիզնեսի

«2009-ԻՆ ՈՒՆԵՆԱՆՔ ՕՐԻՆԱԿԱՆ ԸՆՏՐՈՒԱԾ ԻՇԽԱՆՈՒԹԻՒՆ»

Շարունակում է 5-էն

Ռեժիմն ամէն ինչի գնալու է սեփական աթոռը պահելու համար, արդիւնքում Հայաստանի նկատմամբ պատժամիջոցները լուրջ վնաս են հասցնելու մեր երկրի վարկին ու տնտեսութեանը: Գոհմարած օրէջցօր խորացող տնտեսական ճգնաժամը, որ մեր երկրի համար շատ աւելի վնասաբեր է լինելու: Քանի դեռ իշխում է այս ռեժիմը, քանի մենք դրանից չենք ազատուել, երկիրը բնականոն գարգացում ունենալ չի կարող:

- Ի՞նչու է, ըստ Ձեզ, պատճառը, որ իշխանութիւնները այս կամ այն կերպ փորձում են յետաձգել »7-ի գործի« դատավարութիւնը:

- Իշխանութեան մէջ լուրջ խմորումներ կան, ներքին դժգոհութիւններ կան, քաղաքական կամքի բացակայութիւն: Չգիտեն՝ ինչ անել: Իսկ երբ իշխանութիւնը չգիտի՝ ինչ անել, բնականաբար, կատարում է գործողութիւններ, որոնք որեւէ տրամաբանութեան մէջ չեն տեղաւորուում: Կայ թոյլ իշխանութիւն, կայ լրջագոյն ընդդիմութիւն, որպիսին Հայաստանում երբեք չի եղել, գոհմարած Արեւմուտքի բացասական տրամադրութեան ինչնք այս իշխանութիւնների նկատմամբ: Դա խօսում է այն մասին, որ այս իշխանութիւնները լրիւ կորցրել են իրենց, չեն կարող գոյատևել եւ մօտ ապագայում ուղղակի տապալուելու են:

- Ստեղծուած իրավիճակը թերեւս աւելի է բարդանում ԼՂ հարցում միջնորդ երկրների անախտադէպ ակտիւացմամբ ու տարատեսակ յայտարարութիւններով: Որքանով դա կարող է անդրադառնալ հակամարտութեան կարգաւորման գործընթացի վրայ:

Նկատմամբ, որոնք ամենաշատ հարկերն են վճարում, խստացնի քաղաքականութիւնը խոշորների նկատմամբ. այդ տեսանկիւնից հազուադէպ մտքեր կարող են հանդի-

- Սերժ Սարգսեանը երբ համաձայնութեան է եկել միջնորդ երկրների հետ, որ կը լուծի դարաբաղեան խնդիրը, մտածել է, թէ կը կարողանայ Ռոբերտ Քոչարեանի պէս՝ առնուազն հինգ տարի խաբելով երկարաձգել իր իշխանութիւնը: Սակայն ոչ Արեւմուտքն է յիմար, ոչ Ռուսաստանը, եւ նրանք հիանալի հասկանում են, որ Սերժ Սարգսեանը խաղում է իրենց հետ: Դրա համար էլ Եւրոպան, որ նախկինում յամառօրէն չէր օգտագործում «քաղաքատարկեալ» տերմինը, այժմ կոշտացրել է իր դիրքորոշումը:

- Ստեղծուած իրավիճակում ո՞րն է Հայ Ազգային Կոնգրեսի դերը:

- Հայ Ազգային Կոնգրեսը մեծագոյն դեր ունի: Չլինելով իշխանութիւն՝ մենք մեր հաւասարակշիռ պահուածքով, մեր պետական մօտեցմամբ փորձում ենք ամէն ինչ անել, որ չվնասենք մեր պետականութեանը: Երկիրը պէտք է ունենայ լեգիտիմ նախագահ: Եթէ Սերժ Սարգսեանը լեգիտիմ լինէր, այսքան խնդիրների առջեւ երկիրը չէր կանգնի: ՀԱԿ-ն իր գուսպ պահուածքով եւ ակտիւ աշխատանքով նպաստում է, որ ԼՂ հարցում ՀԱԿ պատճառով որեւէ ոտնձգութիւն չլինի: Բայց ինչպէս առաջին նախագահ Լեւոն Տէր-Պետրոսեանն ասաց, ԼՂ ժողովուրդն ինքը պէտք է ընդլզի, որ մենք կարողանանք օգնել հիմնախնդրի լուծմանը՝ ի նպաստ հայ ժողովրդի: ՀԱԿ-ը կարող էր շարունակել երթերն ու հանրահաւաքները, բայց դրանից կ'օգտուէին մեր արտաքին թշնամիները: Մենք ձգտում ենք չվտանգել ԼՂ հարցի հայնպատ լուծմանը: Մենք խնդրի շունենք իշխանութեան գալու, այլ խնդրի ունենք ունենալ կալուէն երկիր: Մենք գալու ենք իշխանութեան, բայց ոչ ամէն գնով:

պել մեր պետական այրերի մօտ, որ համապատասխանեն մեր կողմից նշուած պահանջներին: Իսկ ընդհանուր առմամբ՝ արևում է ճիշդ հակառակը:

**ՆՈՐ ՍԵՐՈՒՆԴ**  
**ՆՈՐ ՍԵՐՈՒՆԴ**  
 ՀԵՌՈՒՍԱՏԵՍԻԻ  
 ՅԱՅՏԱԳԻՐԻ  
 ԺԱՄԱՆԱԿԱՑՈՅՅԸ

CHARTER CABLE  
 280-ՐԳ-ԿԱՅԱՆ  
 (ԿԼԵՆՏԵՅԼ, ՊԵՐՊԵՆՔ, ԼԱՔՐԷՍԵՆԹԱ)  
 GLOBACAST SATELLITE  
 ՀԻՆՉԱՐԹԻ ԵՐԵԿՈՅԵԱՆ  
 ԺԱՄԸ 10:00-11:00

**ՎԱՐՉՈՒ ՅԱՐԿԱՐԱԺԻՆ ՓԱՍԱՏԻՆԱ**

Վարձու յարկաբաժին,  
 50 N. Craig Avenue, 2  
 ննջարան, հիւրասենեակ,  
 A/C, վարձք \$1,250  
 ամսական:  
 Հեռ. (626) 797-8623:

REQUEST FOR PROPOSALS  
 (RFP No. 7508)  
 PEST CONTROL SERVICES

The Housing Authority of the City of Los Angeles invites proposals from qualified, experienced extermination firms to provide Pest Control Services to 7,165 multi-family residential units, management offices, and community services at various locations owned by the Authority. The contractor must provide services in a manner that demonstrates sensitivity to the fact that the Authority's properties are primarily residential in nature and puts the needs of the residents as the foremost priority. The contractor shall control pests using integrated pest management consistent with U.S. Department of Housing and Urban Development's Guidance on Integrated Pest Management ("IPM"). Copies of the RFP may be obtained beginning January 12, 2009 online at [www.hacla.org](http://www.hacla.org) under "Business with HACLA", then select "Procurement Opportunities" and click "Professional Services" or by calling (213) 252-5405. Proposals will be accepted until 2:00 P.M., February 13, 2009.

1/15/09  
 CNS-1495297#  
 MASSIS WEEKLY










# MISSION WINE & SPIRITS

## GLENDALE

<b>Johnnie Walker Black Label</b> 750ml  <b>\$17.99</b>	<b>Hennessy VS</b> 750ml  <b>\$19.99</b>	<b>Grey Goose Vodka</b> 750ml  <b>\$21.99</b>	<b>Patron Silver Tequila</b> 750ml  <b>\$31.99</b>	<b>Russian Standard Vodka</b> 750ml  <b>\$9.99</b>	<b>White Queen Vodka</b> 750ml  <b>\$5.99</b>	<b>Vedi-Alco Fruit Wine</b> Red Semi-Sweet 750ml  <ul style="list-style-type: none"> <li>• Blackberry</li> <li>• Cherry</li> <li>• Raspberry</li> </ul> <b>\$4.99</b> each	
<b>Meukow VS</b> 750ml  <b>\$14.99</b>	<b>Meukow XO Gift</b> 750ml  <b>\$69.99</b>	<b>Noah Patriarch X</b> 750ml  <b>\$21.99</b>	<b>Noy Classic 10 Years</b> 750ml  <b>\$25.99</b>	<b>Noy Classic 5 Years</b> 750ml  <b>\$15.99</b>	<b>Sayat Nova</b> 750ml  <b>\$18.99</b>	<b>Tigran 20 Years</b> 750ml  <b>\$82.99</b>	<b>Arak El Massaya</b> 750ml  <b>\$19.99</b>
<b>Arak Gantous</b> 750ml  <b>\$11.99</b>	<b>Arak Haddad Gold</b> 750ml  <b>\$11.99</b>	<b>Arak Shellelet</b> 750ml  <b>\$8.99</b>	<b>Arak Touma</b> 750ml  <b>\$12.99</b>	<b>Arak Al Mimas</b> 750ml  <b>\$11.99</b>	<b>1800 Reposado</b> 750ml  <b>\$15.99</b>	<b>Cazadores Reposado</b> 750ml  <b>\$19.99</b>	<b>Corralejo Reposado</b> 750ml  <b>\$21.99</b>
<b>Avshar 5 Year Armenian Brandy</b> 750ml  <b>\$9.99</b>	<b>Don Julio Anejo</b> 750ml  <b>\$36.99</b>	<b>Don Julio Blanco</b> 750ml  <b>\$29.99</b>	<b>EL Jimador Reposado/Silver</b> 750ml  <b>\$14.99</b>	<b>Jose Cuervo</b> 750ml  <b>\$10.99</b>	<b>Jose Cuervo La Familia</b> 750ml  <b>\$69.99</b>	<b>Jose Cuervo Traditional</b> 750ml  <b>\$15.99</b>	<b>Patron Anejo</b> 750ml  <b>\$38.99</b>
<b>Patron Café XO</b> 750ml  <b>\$16.99</b>	<b>Almaza Beer</b> 6PK  <b>\$6.49</b>	<b>Corona Beer</b> 12PK  <b>\$11.99</b>	<b>Heineken Beer</b> 12PK  <b>\$11.99</b>	<b>Kotayk Beer</b> 6PK  <b>\$5.49</b>	<b>Gerolsteiner Water</b> 1L  <b>\$0.89</b>	<b>Pellegrino Water</b> 1L  <b>\$1.69</b>	<b>Perrier Water</b> 25oz  <b>\$1.39</b>



825 W. Glenoaks Blvd.  
Glendale, CA 91202  
(818) 242-0683

Open Monday - Saturday 9AM - 8PM

\*This ad expires on 01/18/09 • We reserve the right to limit quantities • No CC • Sales tax excluded • Prices subject to change without notice • All items are 750ml in size unless specified